



ՀՀ ԿԳՄՄՆ

ԱՐԱՐԱՏԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ
ՔՈԼԵՋ

ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ

Քննարկվել և հավանության է արժանացել՝
ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի տարածաշրջանային
պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
«Սոցիալ-տնտեսագիտական և հաշվապահական
հաշվառման» ամբիոնի 20.05.2022թ N°10 նիստում

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ, ԹԵՍՏԵՐԻ
ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Ռ. Հարությունյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հաշվապահական հաշվեկշիռ և հաշիվներ.....	3
Պաշարների հաշվառում.....	38
Դեբիտորական պարտքեր.....	51
Ոչ նյութական ակտիվներ.....	57
Սեփական կապիտալ, եկամուտների և ծախսերի հաշվառում.....	70
Հարկային օրենսդրություն.....	85
Հիմնական միջոցների հաշառում.....	89

1. Հաշվապահական հաշվեկշիռ և հաշիվներ

Խնդիր 1

Կատարել Փյունիկ ՍՊԸ-ի տնտեսական միջոցների խմբավորումը ըստ կազմի և տեղաբաշխման խմբավորումը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ.

	Տնտեսական միջոցի անվանումը	Գումարը հ.դ
1	Տրված կանձավճարներ թերթերի և ամսագրերի բաժանորդագրության գծով	4100
2	Մետաղյա պահարաններ	15900
3	հաստոց	15000
4	Արտադրամասի շենք	230000
5	Կանխիկ դրամական միջոցներ դրամարկղում	3000
6	արտոնագիր	20500
7	հեռախոս	4000
8	Վարչական շենք	62500
9	Պատրաստի արտադրանք պահեստում	24000
10	Պղնձյալար	12000
11	Պահեստամասեր սարքավորումների նորոգման համար	18000
12	Պողպատյա ժապավեն	16300
13	Վարչական շենք	113000
14	սարքավորումներ	94700
15	համակարգիչներ	65000
16	Մարդատար ավտոմեքենա	83000
17	Դրամական միջոցներ հաշվարկային հաշվում	88000
18	Բեռնատար ավտոմեքենաներ	104000
19	Կազմակերպության սեփական հողատարածք	75000
20	Անավարտարտ ադրություն	11100
21	Տարբեր նյութեր պահեստում	19000
22	Պահեստի շենք	48900
23	վառելյան նյութ	2000
24	Տնտեսական գույք	21000
25	Մետաղյա պարիսպ	16000

	Ընդամենը	1166000
--	----------	---------

Խնդիր 2

Կատարել Փյունիկ ՄՊԸ-ի տնտեսական միջոցների խմբավորումը ըստ գոյացման աղբյուրների 2018թ. հունվարի 1-ի դրությամբ.

	Տնտեսական միջոցների գոյացման աղբյուրներ անվանումը	Գումարը հ.դ
1	Պարտք մատակարարին ձեռքբերված նյութերի դիմաց	19600
2	Կանոնադրական կապիտալ	600000
3	Պարտք բյուջեին շահութահարկի գծով	24400
4	Հաշվետու տարվա չբաշխված շահույթ	96000
5	Էմիսիոն եկամուտ	126000
6	Ընթացիկ պահուստ	18000
7	Պարտք այլ կրեդիտորներին	22000
8	Պահուստային կապիտալ	90000
9	Պարտք աշխատողներին աշխատավարձի գծով	10000
10	Պարտք բանկին 2 տարով վերցված վարկի դիմաց	60000
11	Այլ կազմակերպություններից ստացված փոխառություն մինչև 1 տարի ժամկետով	59000
12	Պարտք բանկին մինչև 1 տարի վերցված վարկի դիմաց	41000
	ընդամենը	1166000

Խնդիր. Կատարել կահույքի ֆաբրիկայի տնտեսական միջոցների
 և գոյացման աղբյուրների դասակարգում

	տնտեսական միջոցների և գոյացման աղբյուրների անվանումը	գումարը/հ.դ/
1	սեղաններ պահեստում	25000
2	տախտակներ պահեստում	21000
3	պարտք մատակարարին ստացված նյութերի դիմաց	58000
4	դրամական միջոց դրամարկղում	15000
5	դրամական միջոց հաշվարկային հաշվում	50000
6	կրեդիտորական պարտք բյուջեին	5000
7	պարտք աշխատողներին աշխատավարձի գծով	100000
8	վարչական շենք	20000
9	բեռնատար ավտոմեքենա	12000
10	հումք և նյութեր	14000
11	պատրաստի արտադրանք պահեստում	60000
12	հիմնական միջոցների մաշվածություն	10000
13	կարճաժամկետ բանկային վարկ	25000
14	հաշվետու տարվա շահույթ	19000
15	անավարտ արտադրություն	18000
16	բանկային վարկի պարտավորություն/երեք տարի ժամկետով/	10000

Խնդիր 3

<Կարեն>ՍՊԸ-ն, Ջավենը և Արմենը 2019թ.փետրվարին ստեղծում են<Մենուս>ՍՊԸ-ն

1 միլիոն դրամ կանոնադրական կապիտալով: <Կարեն>ՍՊԸ-ն ներդնում է 400 հազ. դրամ արժեք ունեցող սարքավորում, Ջավենը՝ 250 հազ. դրամ արժեքի նյութեր , իսկ Արմենը՝ 350 հազ. դրամ գումար: Փետրվար ամսում այլ գործառնություններ չեն կատարվում:

Կազմել հաշվեկշիռը փետրվարի վերջի դրությամբ.

2019թ մարտ ամսին կազմակերպությունը ձեռք է բերում <Փայլ> ՍՊԸ-ից 80 հազ. դրամ գումարի ապրանքներ և 300 հազ. դրամի նյութեր , որոնց դիմաց վճարում է 340 հազ. դրամ:

Կազմել հաշվեկշիռը մարտի 31-ի դրությամբ.

Ապրիլ ամսին կազմակերպությունը վաճառում է ապրանքներ 50 հազ.դրամ գումարով: Վաճառված ապրանքների ձեռքբերման արժեքը 40 հազ. դրամ է: Վաճառքից ընկերության դրամարկղ է մուտքագրվում 30 հազ. դրամ գումար:

Կազմել հաշվեկշիռը ապրիլի 30-ի դրությամբ:

Տնտեսական գործառնությունների փոփոխությունները

. Սայիսի 5-ին<Կարեն >ՍՊԸ-ի գնորդը վճարում է կազմակերպության ունեցած պարտքը / մարվում է դեբիտորական պարտքը /10000դրամ գումարով:

.մայիսի 10-ին<Կարեն> ՍՊԸ-ն ձեռք է բերում 50000 դրամի նյութեր, որոնց դիմաց դեռևս վճարում չի կատարել:

. մայիսի 15-ին -ն<Կարեն>ՍՊԸ-ն մարում է գնումների գծով կրեդիտորական պարտքը 30000դրամ գումարով:

.մայիսի 20-ին<Կարեն>ՍՊԸ-ն բանկից վերցնում է կարճաժամկետ վարկ 40000 դրամ և մարում է մատակարարին ունեցած պարտքը:

Կազմել հաշվեկշիռը մայիսի 31-ի դրությամբ:

Խնդիր 4 -Միջոցների և դրանց գոյացման աղբյուրների հավասարությունը

Երկու ընկերներ ստեղծում են կազմակերպություն՝ «Շինանյութ» ՓԲԸ, 5 000 000 մլն.դրամ կանոնադրական կապիտալով/ յուրաքանչյուրը՝2 500 000 դրամ/:Նրանք ձեռք են բերում կրպակ՝վճարելով 3.000.000 դրամ,գույք՝ շինանյութերի ցուցադրման համար,վճարելով 700.000դրամ, և բեռնատար ավտոմեքենա՝վճարելով 1300.000դրամ:/մայիսի 31-ի դրությամբ/:

Ակտիվ
պասիվ

միջոց/ակտիվ		գոյացման աղբյուր	
-------------	--	------------------	--

ոչ ընթացիկ		սեփական կապիտալ	
կրպակ		կանոնադրական կապիտալ	500000
բեռնատար ավտոմեքենա			
ընթացիկ		պարտավորություն	
դրամական միջոց			
գույք			
հաշվեկշիռ		հաշվեկշիռ	500000

«Շինանյութ» ՓԲԸ-ն հունիսի 5-ին մանրածախ վաճառք իրականացնելու նպատակով Մատակարար ՍՊԸ-ից պարտքով ձեռք է բերում 1.200.000 դրամ մեծածախ գներով շինանյութ: Ընկերությունը հունիս ամսին 1200 000 դրամ արժեքով շինանյութը վաճառում է 1 500 000 դրամով, ստացված կանխիկ դրամը մուտքագրում է դրամարկդ: Կատարում է 200 000 դրամի ծախս/աշխատավարձ, էլ. էներգիա, հեռախոս և այլն/որոնց դիմաց իրականացվում են վճարումներ:

Խնդիր 5

Կազմել « Մաքս» կազմակերպության հաշվապահական հաշվեկշիռը 200X թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

1. Հիմնական միջոցներ
386000
2. Ոչ նյութական ակտիվներ
30000
3. Նյութեր
62000
4. Անավարտ արտադրություն
2000

- 5. Արտադրանք
24000
- 6. Դեբիտորական պարտք վաճառքի գծով 6000
- 7. Դրամարկո
10000
- 8. Հաշվարկային հաշիվ
90000
- 9. Կանոնադրական կապիտալ
300000
- 10. Կուտակված շահույթ
47000.
- 11. Բանկի երկարաժամկետ վարկ
200000
- 12. Կրեդիտորական պարտք գնումների գծով 28000
- 13. Կրեդիտորական պարտք աշխատավարձի վճարման գծով
35000

Խնդիր 6

Պահանջվում է «Վիկտորիա» կազմակերպության տվյալների հիման վրա բացել հաշվապահական հաշիվներ, գրանցել սկզբնական մնացորդները, արտացոլել եռամսյակի ընթացքում կատարված փոփոխությունները կրկնակի գրանցման եղանակով, որոշել շրջանառությունը և վերջնական մնացորդը.

Տվյալներ «Վիկտորիա» կազմակերպության հաշվապահական հաշվեկշիռը 2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Ակտիվ	գումարը հազ.դրամ
1. Ոչ ընթացիկ ակտիվներ	
Հիմնական միջոցներ	560000
Ըջ նյութական ակտիվներ	51000
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	611000
2. Ընթացիկ ակտիվներ	
Նյութեր	102300
Անավարտ արտադրություն	19400
Արտադրանք	21200
Դեբիտորական պարտքեր վաճառքի գծով	64900
Դրամական միջոցներ	131200

Ընդամենը ընթացիկ ակտիվներ	339000
Հշվեկշիռ	950000

Պասիվ	գումարը հազ.դրա
3.Սեփական կապիտալ	
Կանոնադրական կապիտալ	160000
Էմիսիոն եկամուտ	90000
Կուտակված շահույթ	80000
Պահուստային կապիտալ	20000
Ընդամենը սեփական կապիտալ	350000
4.Ոչ ընթացիկ պարտավորություններ	
Երկարաժամկետ բանկային վարկեր	350000
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	350000
5.Ընթացիկ պարտավորություններ	
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	83800
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	24000
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	104600
Ընթացիկ պահուստներ	37600
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	250000
Հաշվեկշիռ	950000

Ղրամական միջոցների հոդվածի վերծանումը դրամարկղ
4200դրամ,

հաշվարկային հաշիվ 127000դրամ:

Հաշվետու տարվա 1-ին եռամսյակում տեղի ունեցած
տնտեսական գործառնությունները

h/h	Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	գումարը հազ.դրամ
1	Հաշվարկային հաշվում ստացվել է բանկի կարճաժամկետ վարկի գումար	12500
2	Հաշվարկային հաշվից ստացվել և մուտքագրվել է դրամարկղ կանխիկ դրամ	104600
3	Վճարվել է կազմակերպության	94600

	աշխատողներին աշխատավարձ	
4	Հաշվարկային հաշվից փոխանցվել է մատակարարին պարտքի գումարը	20800
5	Արտադրանքի թողարկման համար ծախսվել են նյութեր	36000
6	Հաշվարկային հաշիվ է մուտքագրվել հիմնադիրներից դրպես ներդրում կանոնադրական կապիտալում	18600
7	Հաշվարկային հաշվից փոխանցվել է բյուջեին պարտքի դիմաց	24000
8	Արտադրությունից մուտքագրվել է պահեստ պատրաստ արտադրանք	53100

Առաջադրանք1

Կատարել կրկնակի գրանցումներ հաշիվներում

Գործառնություններ.

1. Հաշվարկվել է աշխատավարձ հիմնական արտադրության բանվորներին 300 000 դրամ

2. Հաշվարկային հաշվից գումար է մուտքագրվել դրամարկղ 300 000 դրամ

3. Դրամարկղից վճարվել է աշխատավարձ 280 000 դրամ

4. Տրվել է արտադրությանը նյութեր վերամշակման համար 400 000 դրամ

5. Հաշվարկային հաշվից մարվել է գումաների գծով ԿՊ 100 000 դրամ

6. Գնվել սարքավորում ԿՊ առաջացմամբ 700 000

7. Հաշվարկային հաշվից մարվել է Բյուջեի պարտքը 60 000 դրամ

8. Արտադրությունից մուտքագրվել է պահեստ պատրաստ արտադրանք 700 000 դրամ

9. Բանկից վերցվել է կարճաժամկետ վարկ և փոխանցվել հաշվարկային հաշիվ 1 000 000 դրամ

10. Տրվել է կանխավճար ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար 50000

11. Ստացվել է կանխավճար 150000

12Ձեռք է բերվել հիմնական միջոց առհաշիվ գումարի հաշվին 750000

13.Սուտքագրվել է նյութեր որպես ներդրում կանոնադրական կապիտալում 50000

14.Տրվել է կանխավճար ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար

Առաջադրանք 2

Ստորև բերված են որոշ հաշվեկշռային հաշիվների արժեքներ:

Հաշվարկել՝

- 1.Ակտիվների ընդհանուր գումարը
- 2.Կապիտալի ընդհանուր գումարը
- 3.Պարտավորությունների ընդհանուր գումարը

Շենքեր	10000
Դեֆիտորական պարտքեր	30000
Կրեդիտորական պարտքեր	5000
Կրեդիտորական պարտքեր	20000
Համակարգչային ծրագրեր	1000
Կահույք	4000
Պաշարներ	6000
Համակարգչային տեխնիկա	3000
Դրամական միջոցներ	24000
Սկզբնական կապիտալ	50000
Շահույթ	3000

Առաջադրանք 3

Ստորև բերված տվյալների հիման վրա կազմել ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն.

Հաշվարկել՝

- 1.համախառն եկամուտը
 - 2.վաճառված ապրանքների ինքնարժեքը
 - 3.շահույթը
- Հասույթ - 20000

Պաշարներ հաշվետու ժամանակաշրջանի սկզբում - 10000+15000-7000
18000

Գնումներ - 15000

Աշխատավարձի գծով ծախս - 1000

Պաշարներ հաշվետու ժամանակաշրջանի վերջում - 7000

Վարձակալության գծով ծախս - 500

ՀԱՇՎԱՅԻՆ ՊԼԱՆ

Առաջադրանք 4

Գրել հաշիվների կողերը, ակտիվային, պասիվային , ակտիվա-պասիվային , կարգավորող պատկանելությունը

- 1.Ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկում
- 2.Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ
- 3.Երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր
- 4.Գուղվիլ
- 5.Ապրանքներ
- 6.Ապրանքների վաճառքի գնի և ինքնարժեքի տարբերություն
- 7.Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով
- 8.Զվճարված կապիտալ
- 9.Գյուղատնտեսական գործունեությունից եկամուտ
- 10.Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ
- 11.Անուղղակի արտադրական ծախսումներ
- 12.Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր
- 13.վարչական ծախսեր
- 14.Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտներ
- 15.Իրացված արտադրանքի, ապրանքների հետ վերադարձումից հասույթի ճշգրտում
- 16.Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով
- 17.Ակտիվներին վերաբերող շնորհներ
- 18.Հետ գնված կապիտալ
- 19.նախորդ տարիների ֆինանսական արդյունքների ճշգրտում
- 20.Անավարտ արտադրություն
- 21.Հետաձգված հարկային ակտիվներ
- 22.Հիմնական միջոցների մաշվածություն
- 23.Ներդրումային գույք

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

հաշվի կոդը	Հաշվի անվանումը	Ակտիվային հաշիվ	Պասիվային հաշիվ	Սինթետիկ հաշիվ	Անալիտիկ հաշիվ	Հաշվեկշռային հաշիվ	կառավարչ. հաշվ. հաշիվ
2141							
1316							
512							
1116							
611							
119							
421							
6141							
7111							
821							
8233							
825							
911							
947							
8114							
724							
625							
529							
5231							

224							
152							
1184							
6711							
771							
119							
612							
3111							
314							
313							

Առաջադրանք

Ձևակերպել գործառնությունները

1. դրամարկղից վճարվել է 13000 դրամ ձեռք բերված նյութերի դիմաց
2. արտադրանքի թողարկման համար բանվորներին հաշվարկվել է 17000 դրամի աշխատավարձ
3. արտադրանքի թողարկման համար ծախսվել են 13000 դրամի նյութեր
4. արտադրությունից պահեստ է մուտքագրվել 33000 դրամի պատրաստի արտադրանք
5. հաշվարկային հաշիվ է մուտքագրվել գնորդների պարտքը 50000 դրամ
6. հաշվարկվել է վարչական աշխատողների աշխատավարձը 45000 դրամ
7. հաշվարկային հաշվից մարվել է մատակարարների պարտքը 32000 դրամ
8. պահեստից դուրս է գրվել իրացված արտադրանքը 31000 դրամ փաստացի ինքնարժեքով

9. ձեռնարկության դրամարկը է մուտքագրվել իրացված արտադրանքի հասույթը 4200

ՏԵՍԱԿԱՆ ԹԵՍՏԵՐ

1. Որո՞նք են այն առանձնահատկությունները, որով հաշվապահական հաշվառումը տարբերվում է տնտեսական հաշվառման մյուս տեսակներից՝

ա) տնտեսական գործունեության իրադարձությունների համատարած գրանցում, անընդհատ հաշվառում, տնտեսական դեպքերի փաստաթղթավորում

բ) հասարակական երևույթների օրինաչափությունների ուսումնասիրում,

գ) առանձին երևույթների ընտրանքային ուսումնասիրություն

դ) մյուսական արտադրության զարգացման օրինաչափությունների ուսումնասիրում

2. Ո՞րն է հաշվապահական հաշվառման առարկան.

ա) կազմակերպության ակտիվները և դրանց դերը կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության մեջ,

բ) տնտեսական գործառնությունները,

գ) ֆինանսատնտեսական գործունեության հետևանքները,

դ) ամբողջ ֆինանսատնտեսական գործունեությունը

3. Որո՞նք են համարվում հաշվապահական հաշվառման ուսումնասիրության օբյեկտները.

ա) տնտեսական միջոցների գոյացման աղբյուրները և տնտեսական պրոցեսները,

բ) կազմակերպության ակտիվները

գ) ներդրումները և շահույթը

դ) կազմակերպության ակտիվները, դրանց գոյացման աղբյուրները, տնտեսական գործընթացները և գործունեության ֆինանսական հետևանքները:

4. Ո՞ր միջոցն է համարվում ակտիվ.

- ա) կազմակերպության կողմից վերահսկվող այն տնտեսական միջոցները, որոնց օգտագործումից կազմակերպությունն ակնկալում է տնտեսական օգուտների ստացում
- բ) կազմակերպության կողմից վերահսկվող այն տնտեսական միջոցները, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել
- գ) այն բոլոր տնտեսական միջոցները, որոնք օգտագործվում են արտադրանք թողարկելու համար
- դ) այն բոլոր տնտեսական միջոցները, որոնք օգտագործվում են կազմակերպության կողմից երկարատև ժամանակաշրջանում

5. Կազմակերպության ոչ ընթացիկ ակտիվներն են՝

- ա) հիմնական միջոցները, երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունները, ոչ նյութական ակտիվները,
- բ) ոչ նյութական ակտիվները, հիմնական միջոցները, երկարաժամկետ ֆինանսական ակտիվները, հետաձգված հարկային ակտիվները, այլ ոչ ընթացիկ ակտիվները,
- գ) հիմնական միջոցները, դրամական միջոցները, ոչ նյութական ակտիվները:
- դ) հիմնական միջոցները և պաշարները

6. Կազմակերպության ընթացիկ ակտիվներն են՝

- ա) սարքավորումները, ինչպես նաև դրամական միջոցները դրամարկղում և բանկային հաշիվներում,
- բ) պաշարները, ինչպես նաև սարքավորումները,
- գ) պաշարները, դրամական միջոցները, կարճաժամկետ ֆինանսական ներդրումները, գործառնական և այլ ընթացիկ դեբիտորական պարտքերը:
- դ) համակարգիչները և պահեստամասերը

7. Կազմակերպության ընթացիկ ակտիվներն են՝

- ա) վաճառքի համար ձեռքբերված սարքավորումը
- բ) կազմակերպությունում օգտագործվող սարքավորումը
- գ) համակարգչային ծրագրերը
- դ) համակարգիչները

8. Կազմակերպության ոչ ընթացիկ ակտիվներին են վերաբերում՝

- ա) 10 ամիս օգտագործման ժամկետ ունեցող գործիքները
- բ) 12 ամսից ավել օգտագործման ժամկետ ունեցող մեքենաները և սարքավորումները
- գ) դրամական միջոցները
- դ) վաճառքի համար նախատեսված ապրանքները

9. Օգտագործման համար գնված վառելիքը դասակարգվում է որպես՝

- ա) ապրանք
- բ) արտադրանք
- գ) նյութ
- դ) հիմնական միջոց

10. Արտադրամասում շահագործվող հաստոցները դասակարգվում են որպես՝

- ա) ոչ ընթացիկ նյութական ակտիվ
- բ) ոչ նյութական ակտիվ
- գ) ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվ
- դ) պաշար

11. Լիցենզիաները դասակարգվում են որպես՝

- ա) ոչ ընթացիկ նյութական ակտիվ
- բ) ոչ նյութական ակտիվ
- գ) ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվ
- դ) դեբիտորական պարտք

12. Վաճառքի համար պատրաստված հաստոցները դասակարգվում են որպես՝

- ա) հիմնական միջոց
- բ) ոչ նյութական ակտիվ
- գ) ապրանք
- դ) արտադրանք

13. Գնորդների պարտքը կազմակերպությանը դասակարգվում է որպես՝

- ա) դրամական միջոց
- բ) դեբիտորական պարտք
- գ) ապրանք
- դ) կրեդիտորական պարտք

14. Հաշվապահությունում օգտագործվող համակարգչային ծրագրերը դասակարգվում են որպես՝

- ա) հիմնական միջոցներ

- բ) ոչ նյութական ակտիվ
- գ) ապրանք
- դ) ֆինանսական ակտիվ

15. Կազմակերպության կողմից արտադրված արտադրանքը դասակարգվում է որպես՝

- ա) պաշար
- բ) ոչ նյութական ակտիվ
- գ) հիմնական միջոց
- դ) ֆինանսական ակտիվ

16. Կազմակերպության կողմից օգտագործվող արագամաշ առարկաները դասակարգվում է որպես՝

- ա) պաշար
- բ) ոչ նյութական ակտիվ
- գ) հիմնական միջոց
- դ) ֆինանսական ակտիվ

17. Կազմակերպության կողմից օգտագործվող արագամաշ առարկաներին են վերաբերում՝

- ա) մինչև 12 ամիս օգտագործման ժամկետ ունեցող գործիքները
- բ) 18 ամիս օգտագործման ժամկետ ունեցող գործիքները
- գ) վաճառքի համար պատրաստված գործիքները
- դ) վաճառքի համար ձեռքբերված գործիքները

18. Կազմակերպության կողմից օգտագործվող հողակտորը դասակարգվում է որպես՝

- ա) ոչ ընթացիկ նյութական ակտիվ
- բ) ոչ նյութական ակտիվ
- գ) ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվ
- դ) սեփական կապիտալ

19. Անավարտ արտադրությանն է վերաբերում՝

- ա) պահեստում գտնվող և վաճառքի համար պատրաստ արտադրանքը
- բ) արտադրամասում, վերամշակման գործընթացում գտնվող շինվածքները

- գ) պահեստում պահվող և արտադրանք պատրաստելու համար նախատեսված հումքը
- դ) գնովի կիսապատրաստուքները պահեստում

20. Հաշվարկային հաշիվը`

- ա) կազմակերպության դրամարկղում պահվող կանխիկ դրամն է,
- բ) կազմակերպության շահույթն է,
- գ) կազմակերպության սեփական կապիտալն է,
- դ) բանկային հաշվում պահվող կազմակերպության ազատ դրամական միջոցներն են:

21. Առհաշիվ տրված գումարները դասակարգվում են որպես`

- ա) դրամական միջոց,
- բ) դեբիտորական պարտք,
- գ) ֆինանսական ակտիվ,
- դ) կրեդիտորական պարտք:

22. Կարճաժամկետ բանկային վարկը`

- ա) ոչ ընթացիկ պարտավորություն է
- բ) դեբիտորական պարտք է
- գ) ընթացիկ պարտավորություն է
- դ) դրամական միջոց է

23. Երկարաժամկետ բանկային վարկը

- ա) ոչ ընթացիկ պարտավորություն է
- բ) դեբիտորական պարտք է
- գ) ընթացիկ պարտավորություն է
- դ) դրամական միջոց է

24. Բյուջեի հանդեպ շահութահարկի գծով պարտքը համարվում է`

- ա) ոչ ընթացիկ պարտավորություն
- բ) դեբիտորական պարտք,
- գ) ընթացիկ պարտավորություն
- դ) դրամական միջոց

25. Նախորդ տարիների չբաշխված շահույթը համարվում է`

- ա) ոչ ընթացիկ պարտավորություն

- բ) ֆինանսական ակտիվ
- գ) ընթացիկ պարտավորություն
- դ) սեփական կապիտալ

26. Ներգրավված երկարաժամկետ փոխառությունները հանդիսանում են՝

- ա) ոչ ընթացիկ պարտավորություն
- բ) դեբիտորական պարտք,
- գ) ընթացիկ պարտավորություն
- դ) ֆինանսական ակտիվ

27. Կազմակերպության պարտքը պարտադիր սոցիալական ապահովագրության գծով համարվում է՝

- ա) ոչ ընթացիկ պարտավորություն
- բ) դեբիտորական պարտք,
- գ) ընթացիկ պարտավորություն
- դ) ֆինանսական ակտիվ

28. Թվարկվածներից ո՞րն է համարվում սեփական կապիտալի տեսակ՝

- ա) հիմնական միջոց
- բ) դեբիտորական պարտք,
- գ) շահույթ
- դ) դրամական միջոց

29. Թվարկվածներից ո՞րն է դասակարգվում որպես ոչ ընթացիկ պարտավորություն՝

- ա) հիմնական միջոց
- բ) դեբիտորական պարտք վաճառքների գծով
- գ) կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով
- դ) բանկային երկարաժամկետ վարկեր

30. Թվարկվածներից ո՞րն է դասակարգվում որպես ընթացիկ պարտավորություն՝

- ա) պահուստային կապիտալ
- բ) դեբիտորական պարտք,
- գ) կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով

դ) բանկային երկարաժամկետ վարկեր

31. Թվարկվածներից ո՞րը չի համարվում սեփական կապիտալի տեսակ՝

- ա) էմիսիոն եկամուտ
- բ) պահուստային կապիտալ,
- գ) շահույթ
- դ) դրամական միջոց

32. Թվարկվածներից ո՞րը չի դասակարգվում որպես ոչ ընթացիկ պարտավորություն՝

- ա) պարտավորություններ ֆինանսական վարձակալության գծով
- բ) կանոնադրական կապիտալ,
- գ) ստացված երկարաժամկետ փոխառություններ
- դ) բանկային երկարաժամկետ վարկեր

33. Թվարկվածներից ո՞րը չի դասակարգվում որպես ընթացիկ պարտավորություն՝

- ա) պահուստային կապիտալ
- բ) կրեդիտորական պարտքեր գնումների գծով
- գ) կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով
- դ) բանկային կարճաժամկետ վարկեր

34. Հաշվապահական հաշվառման մեթոդը՝

- ա) հաշվապահական հաշվառման օբյեկտների ուսումնասիրության և հետազոտության եղանակների ամբողջությունն է,
- բ) երկու խումբ ցուցանիշների՝ տնտեսական միջոցների և դրանց գոյացման աղբյուրների հանրագումարային տվյալների հաշվեկշռային ընդհանրացման եղանակ է
- գ) ընթացիկ հաշվապահական տեղեկատվության ընդհանրացման եղանակ է
- դ) տնտեսական միջոցների ընթացիկ վերահսկողության եղանակ է

35. Հաշվապահական հաշվառման մեթոդի տարրերն են՝

- ա) կրկնակի գրանցում և վերահսկողություն
- բ) փաստաթղթավորում
- գ) գույքագրում, գնահատում և կալկուլյացիա,

դ) հաշվապահական հաշվեկշիռ և հաշվետվություն, կրկնակի գրանցում և հաշվապահական հաշիվներ, գույքագրում և փաստաթղթավորում, զնահատում և կալկուլյացիա,

36. Կազմակերպության տնտեսական միջոցների և դրանց գոյացման աղբյուրների ընդհանրացման եղանակ է.

ա) հաշվապահական հաշիվները

բ) հաշվապահական հաշվեկշիռը

գ) փաստաթղթավորումը

դ) կրկնակի գրանցումը

37. Կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի և պարտավորությունների առկայության և շարժի հաշվառման եղանակ է՝

ա) հաշվապահական հաշիվները

բ) հաշվապահական հաշվեկշիռը

գ) փաստաթղթավորումը

դ) կրկնակի գրանցումը

Հաշվապահական հաշվեկշիռ

1. Ինչու՞մն է կայանում հաշվապահական հաշվեկշռի նշանակությունը՝

- ա) հաստատել ակտիվների առկայությունը հաշվետու ժամանակաշրջանում,
- բ) արտացոլել կազմակերպության տնտեսական միջոցների գոյացման աղբյուրների մնացորդները հաշվետու ժամանակաշրջանում,
- գ) արտացոլել կազմակերպության կողմից վերահսկվող միջոցների և դրանց գոյացման աղբյուրների մնացորդները որոշակի ամսաթվի դրությամբ՝ դրամական արտահայտությամբ՝
- դ) արտացոլել կազմակերպության կողմից վերահսկվող միջոցների և դրանց գոյացման աղբյուրների մնացորդները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում:

2. Քանի բաժին է ներառված հաշվապահական հաշվեկշռում՝

- ա) չորս,
- բ) հինգ,
- գ) վեց
- դ) երկու

3. Նշվածներից ո՞րը սեփական կապիտալի տարր չէ՝

- ա) կուտակված շահույթ
- բ) կանոնադրական կապիտալ
- գ) հաշվարկային հաշիվ
- դ) պահուստային կապիտալ

4. Նշվածներից ո՞րն է սեփական կապիտալի տարր՝

- ա) կուտակված շահույթ
- բ) սարքավորում
- գ) հաշվարկային հաշիվ
- դ) կանխիկ դրամը դրամարկղում

5. Կազմակերպության գործունեության տարեկան արդյունքների հիման վրա կազմվում է՝

- ա) տարեկան հաշվապահական հաշվեկշիռ
- բ) մեկնարկային հաշվապահական հաշվեկշիռ
- գ) եռամսյակային հաշվապահական հաշվեկշիռ
- դ) հանրագումարային հաշվապահական հաշվեկշիռ

6. Ի՞նչ բաժիններից է բաղկացած հաշվեկշռի ակտիվը՝

- ա) ոչ ընթացիկ և ընթացիկ ակտիվներ
- բ) հիմնական միջոցներ և դրամական միջոցներ
- գ) սեփական կապիտալ և պարտավորություններ
- դ) տնտեսական միջոցներ և դրանց գոյացման աղբյուրներ

7. Ի՞նչ բաժիններից է բաղկացած հաշվեկշռի պասիվը՝

- ա) ոչ ընթացիկ և ընթացիկ ակտիվներ
- բ) հիմնական միջոցներ, երկարաժամկետ բանկային վարկեր և դրամական միջոցներ
- գ) սեփական կապիտալ, ոչ ընթացիկ և ընթացիկ պարտավորություններ
- դ) տնտեսական միջոցներ և դրանց գոյացման աղբյուրներ

8. Ո՞րն է հաշվեկշռի կազմման հիմնական պայմանը՝

- ա) Ակտիվներ = Պասիվներ
- բ) Ակտիվներ = Սեփական կապիտալ - Պարտավորություններ
- գ) Սեփական կապիտալ = Ակտիվներ + Պարտավորություններ
- դ) Պարտավորություններ = Սեփական կապիտալ + Ակտիվներ

9. Նշվածներից ո՞ր հոդվածն է արտացոլվում հաշվապահական հաշվեկշռի «Ոչ ընթացիկ ակտիվներ» բաժնում՝

- ա) կուտակված շահույթ
- բ) նյութեր
- գ) ոչ նյութական ակտիվներ
- դ) դեբիտորական պարտքեր

10. Նշվածներից ո՞ր հոդվածն է արտացոլվում հաշվապահական հաշվեկշռի «Ընթացիկ ակտիվներ» բաժնում`

- ա) կուտակված շահույթ
- բ) ոչ նյութական ակտիվներ
- գ) հաշվարկային հաշիվ
- դ) հիմնական միջոցներ

11. Նշվածներից ո՞րն է արտացոլվում հաշվապահական հաշվեկշռի «Ոչ ընթացիկ պարտավորություններ» բաժնում`

- ա) կրեդիտորական պարտք բյուջեին
- բ) բանկի երկարաժամկետ վարկեր և փոխառություններ
- գ) բանկի կարճաժամկետ վարկեր
- դ) կրեդիտորական պարտք աշխատավարձի գծով

12. Նշվածներից ո՞ր հոդվածն է արտացոլվում հաշվապահական հաշվեկշռի «Ընթացիկ պարտավորություններ» բաժնում`

- ա) կրեդիտորական պարտք բյուջեին
- բ) բանկի երկարաժամկետ վարկեր և փոխառություններ
- գ) պահուստային կապիտալ
- դ) պարտավորություններ Ֆինանսական վարձակալության գծով

13. Նշվածներից ո՞ր հոդվածը չի արտացոլվում հաշվապահական հաշվեկշռի «Ոչ ընթացիկ ակտիվներ» բաժնում`

- ա) ոչ նյութական ակտիվներ
- բ) անավարտ ոչ ընթացիկ ակտիվներ
- գ) հաշվարկային հաշիվ
- դ) հիմնական միջոցներ

14. Նշվածներից ո՞ր հոդվածը չի արտացոլվում հաշվապահական հաշվեկշռի «Ընթացիկ ակտիվներ» բաժնում`

- ա) արագամաշ առարկաներ
- բ) կանոնադրական կապիտալ
- գ) դեբիտորական պարտքեր վաճառքի գծով
- դ) դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

15. Նշվածներից ո՞ր հոդվածը չի արտացոլվում հաշվապահական հաշվեկշռի «Ոչ ընթացիկ պարտավորություններ» բաժնում՝

- ա) կուտակված շահույթ
- բ) բանկի երկարաժամկետ վարկեր և փոխառություններ
- գ) ակտիվներին վերաբերող շնորհներ
- դ) պարտավորություններ Ֆինանսական վարձակալության գծով

16. Նշվածներից ո՞ր հոդվածը չի արտացոլվում հաշվապահական հաշվեկշռի «Ընթացիկ պարտավորություններ» բաժնում՝

- ա) կարճաժամկետ փոխառություններ
- բ) կարճաժամկետ բանկային վարկեր
- գ) կրեդիտորական պարտքեր բյուջեին
- դ) պահուստային կապիտալ

Փոփոխությունները հաշվեկշռում

1. Ի՞նչ տեսակի փոփոխություն է առաջացնում հաշվեկշռում հետևյալ գործառնությունը՝ «Աշխատակցին տրվել է կանխավճար՝ գործուղման համար»

- ա) ակտիվային,
- բ) պասիվային,
- գ) ակտիվապասիվային՝ նվազեցումով
- դ) ակտիվապասիվային՝ ավելացումով

2. Ի՞նչ տեսակի փոփոխություն է առաջացնում հաշվեկշռում հետևյալ գործառնությունը՝ «Ապառիկ ձեռք են բերվել արագամաշ առարկաներ»

- ա) ակտիվային,
- բ) պասիվային,
- գ) ակտիվապասիվային՝ նվազեցումով
- դ) ակտիվապասիվային՝ ավելացումով

3. Ի՞նչ տեսակի փոփոխություն է առաջացնում հաշվեկշռում հետևյալ տնտեսական գործառնությունը՝ «Դրամարկղից աշխատակիցներին տրվել է աշխատավարձ»

- ա) ակտիվային,
- բ) պասիվային,
- գ) ակտիվապասիվային՝ նվազեցումով
- դ) ակտիվապասիվային՝ ավելացումով

4. Ի՞նչ տեսակի փոփոխություն է առաջացնում հաշվեկշռում հետևյալ տնտեսական գործառնությունը՝ «Հաշվարկային հաշվից մարվել է բանկի կարճաժամկետ վարկի գումարը»

- ա) ակտիվային,
- բ) պասիվային,
- գ) ակտիվապասիվային՝ նվազեցումով
- դ) ակտիվապասիվային՝ ավելացումով

5. Ի՞նչ տեսակի փոփոխություն է առաջացնում հաշվեկշռում հետևյալ տնտեսական գործառնությունը՝ «Չաշվարկային հաշվից մատակարարին փոխանցվել են դրամական միջոցներ՝ նախկինում ձեռքբերված ապրանքների դիմաց»

- ա) ակտիվային,
- բ) պասիվային,
- գ) ակտիվապասիվային՝ նվազեցումով
- դ) ակտիվապասիվային՝ ավելացումով

6. Ի՞նչ տեսակի փոփոխություն է առաջացնում հաշվեկշռում հետևյալ գործառնությունը՝ «Չբաշխված շահույթի հաշվին հայտարարվել են շահաբաժիններ հիմնադիրներին »

- ա) ակտիվային,
- բ) պասիվային,
- գ) ակտիվապասիվային՝ նվազեցումով
- դ) ակտիվապասիվային՝ ավելացումով

7. Ի՞նչ տեսակի փոփոխություն է առաջացնում հաշվեկշռում հետևյալ գործառնությունը՝ «Վճարվել է հաշվետու ամսում ծախսված էլեկտրաէներգիայի դիմաց պարտքը»

- ա) ակտիվային,
- բ) պասիվային,
- գ) ակտիվապասիվային՝ նվազեցումով
- դ) ակտիվապասիվային՝ ավելացումով

8. Ի՞նչ տեսակի փոփոխություն է առաջացնում հաշվեկշռում հետևյալ գործառնությունը՝ «Նվիրատվությամբ ստացվել են հաստոցներ»՝

- ա) ակտիվային,
- բ) պասիվային,
- գ) ակտիվապասիվային՝ նվազեցումով
- դ) ակտիվապասիվային՝ ավելացումով

9. Ի՞նչ տեսակի փոփոխություն է առաջացնում հաշվեկշռում հետևյալ գործառնությունը՝ «Ձեռք են բերվել նյութեր, որոնց դիմաց վճարվել է դրամարկից »՝

- ա) ակտիվային,
- բ) պասիվային,
- գ) ակտիվապասիվային՝ նվազեցումով
- դ) ակտիվապասիվային՝ ավելացումով

10. Ի՞նչ տեսակի փոփոխություն է առաջացնում հաշվեկշռում հետևյալ գործառնությունը՝ «Հաշվարկային հաշվում ստացվել է բանկի կարծաժամկետ վարկը»՝

- ա) ակտիվային,
- բ) պասիվային,
- գ) ակտիվապասիվային՝ նվազեցումով
- դ) ակտիվապասիվային՝ ավելացումով

11. Ի՞նչ տեսակի փոփոխություն է առաջացնում հաշվեկշռում հետևյալ գործառնությունը՝ «Արտադրանքի թողարկման համար ծախսվել են նյութեր»՝

- ա) ակտիվային,
- բ) պասիվային,
- գ) ակտիվապասիվային՝ նվազեցումով
- դ) ակտիվապասիվային՝ ավելացումով

12. Ի՞նչ տեսակի փոփոխություն է առաջացնում հաշվեկշռում հետևյալ գործառնությունը՝ «Հաշվարկվել է արտադրության բանվորների աշխատավարձը»՝

- ա) ակտիվային,
- բ) պասիվային,
- գ) ակտիվապասիվային՝ նվազեցումով
- դ) ակտիվապասիվային՝ ավելացումով

13. Ինչպե՞ս է ձևակերպվում գործառնությունը. Հաշվարկային հաշվից դրամարկղում ստացվել է կանխիկ դրամ

- ա) Դտ 252, Կտ 251
- բ) Դտ 251, Կտ 253
- գ) Դտ 251, Կտ 252

դ) Դտ 251, Կտ 511

14. Ինչպե՞ս է ձևակերպվում գործառնությունը.Երկարաժամկետ վարկի հաշվին մարվել է մատակարարի պարտքը

ա) Դտ 521, Կտ 511

բ) Դտ 511, Կտ 521

գ) Դտ 411, Կտ 521

դ) Դտ 521, Կտ 411

15. Ինչպե՞ս է ձևակերպվում գործառնությունը.Կարճաժամկետ վարկի հաշվին մարվել է մատակարարի պարտքը.

ա) Դտ 521, Կտ 511

բ) Դտ 511, Կտ 521

գ) Դտ 411, Կտ 521

դ) Դտ 521, Կտ 411

16. Ինչպե՞ս է ձևակերպվում գործառնությունը.Դրամարկղից տրվել է հաշվետու անձին առհաշիվ գումար

ա) Դտ 251, Կտ 252

բ) Դտ 252, Կտ 251

գ) Դտ 228, Կտ 251

դ) Դտ 229, Կտ 251

17. Ինչպե՞ս է ձևակերպվում գործառնությունը.Դրամարկղից վճարվել է աշխատողների աշխատավարձը

ա) Դտ 527, Կտ 251

բ) Դտ 251, Կտ 527

գ) Դտ 527, Կտ 252

դ) Դտ 252, Կտ 527

18. Ինչպե՞ս է ձևակերպվում գործառնությունը.Կանխիկ դրամը դրամարկղից վերադարձվել է հաշվարկային հաշիվ

ա) Դտ 527, Կտ 251

բ) Դտ 527, Կտ 252

գ) Դտ 251, Կտ 252

դ) Դտ 252, Կտ 251

19. Ինչպե՞ս է ձևակերպվում գործառնությունը. **Յիմնական արտադրությունում արտադրանքի թողարկման համար ծախսվել են նյութեր**

- ա) Դտ 811, Կտ 213
- բ) Դտ 213, Կտ 811
- գ) Դտ 811, Կտ 211
- դ) Դտ 211, Կտ 811

20. Ինչպե՞ս է ձևակերպվում գործառնությունը. **Յիմնական արտադրությունում արտադրանքի թողարկման համար ծախսվել է վառելիք**

- ա) Դտ 811, Կտ 211
- բ) Դտ 812 Կտ 211
- գ) Դտ 811, Կտ 213
- դ) Դտ 211, Կտ 811

21. Ինչպե՞ս է ձևակերպվում գործառնությունը. **Յիմնական արտադրության բանվորներին հաշվարկվել է աշխատավարձ**

- ա) Դտ 527, Կտ 812
- բ) Դտ 527 Կտ 524
- գ) Դտ 811, Կտ 527
- դ) Դտ 527, Կտ 811

22. Ինչպե՞ս է ձևակերպվում գործառնությունը. **Մատակարարներից ապառիկ ստացվել են նյութեր**

- ա) Դտ 216, Կտ 521
- բ) Դտ 211, Կտ 521
- գ) Դտ 521, Կտ 213
- դ) Դտ 521, Կտ 211

1. Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 211, Կտ 521.

- ա) գույքագրման ժամանակ հայտնաբերվել է նյութերի ավելցուկ
- բ) մատակարարից ապառիկ ձեռք են բերվել նյութեր

- զ) անհատույց ստացվել են նյութեր
- դ) վաճառվել են նյութեր

2. Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 811, Կտ 527.

- ա) հիմնական արտադրության բանվորների աշխատավարձից պահվել է խոտանի համար
- բ) կատարվել են սոցապ հատկացումներ հիմնական արտադրության բանվորների համար
- գ) հաշվարկվել է աշխատավարձ հիմնական արտադրության բանվորների համար
- դ) հիմնական արտադրության բանվորներին վաճառվել է կազմակերպության արտադրանքը

3 Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 811, Կտ 211

- ա) պահեստից բաց են թողնվել նյութեր հիմնական արտադրությանը՝ արտադրանք պատրաստելու համար
- բ) գույքագրման ժամանակ հայտնաբերվել է նյութերի պակասորդ
- գ) պահեստից բաց են թողնվել նյութեր օժանդակ արտադրությանը՝ աշխատանք կատարելու համար
- դ) պահեստից բաց են թողնվել նյութեր վարչական շենքը նորոգելու համար

4. Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 811, Կտ 112

- ա) հաշվարկվել է օժանդակ արտադրության հիմնական միջոցների մաշվածությունը
- բ) դուրս է գրվել ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցների մաշվածությունը
- գ) դուրս է գրվել վաճառված հիմնական միջոցների մաշվածությունը
- դ) հաշվարկվել է հիմնական արտադրության հիմնական միջոցների մաշվածությունը

5. Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 527, Կտ 251

- ա) աշխատողների աշխատավարձից պահվել է եկամտահարկ
- բ) աշխատողների աշխատավարձը փոխանցվել է բանկային հաշիվ
- գ) դրամարկղից վճարվել է աշխատողների աշխատավարձը
- դ) կանխիկ դրամը դրամարկղից մուտքագրվել է հաշվարկային հաշիվ

6. Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 111, Կտ 252

- ա) մատակարարից ապառիկ ձեռք են բերվել հիմնական միջոցներ
- բ) գույքագրման ժամանակ հայտնաբերվել է հիմնական միջոցների ավելցուկ
- գ) մատակարարից ձեռք են բերվել հիմնական միջոցներ, որոնց դիմաց վճարվել է դրամարկղից
- դ) մատակարարից ձեռք են բերվել հիմնական միջոցներ, որոնց դիմաց վճարվել է հաշվարկային հաշվից

7. Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 215, Կտ 811

- ա) գույքագրման ժամանակ հայտնաբերվել է պատրաստի արտադրանքի ավելցուկ
- բ) գույքագրման ժամանակ հայտնաբերվել է պատրաստի արտադրանքի պակասորդ
- գ) հիմնական արտադրությունում պատրաստված արտադրանքը մուտքագրվել է պահեստ
- դ) օժանդակ արտադրությունում պատրաստված արտադրանքը մուտքագրվել է պահեստ

8. Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 228, Կտ 251

- ա) դրամարկղից տրվել է աշխատողին առհաշիվ գումար՝ գործուղման համար
- բ) դրամարկղից տրվել է աշխատավարձ աշխատողներին
- գ) դրամարկղում ստացվել է հաշվետու անձից առհաշիվ գումարի չօգտագործված մնացորդը
- դ) գույքագրման ժամանակ հայտնաբերվել է կանխիկ դրամի պակասորդ

9. Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 211, Կտ 228

- ա) դրամարկղից տրվել է աշխատողին առհաշիվ գումար՝ գործուղման համար
- բ) դրամարկղում ստացվել է հաշվետու անձից առհաշիվ գումարի չօգտագործված մնացորդը
- գ) հաշվետու անձի կողմից ձեռք են բերվել նյութեր
- դ) հաշվետու անձի կողմից վաճառվել են նյութեր

10. Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 251, Կտ 311

- ա) կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով բաժնետերերից ստացվել են հիմնական միջոցներ
- բ) կանոնադրական կապիտալի նվազեցման նպատակով վաճառվել է կազմակերպության գույքը
- գ) կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով բաժնետերերից ստացված կանխիկ գումարը մուտքագրվել է դրամարկղ
- դ) կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով բաժնետերերից ստացված գումարը մուտքագրվել է հաշվարկային հաշիվ

11. Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 252, Կտ 221

- ա) հաշվարկային հաշվից վճարվել է մատակարարներից
- բ) հաշվարկային հաշվում ստացվել է մատակարարներից
- գ) հաշվարկային հաշվում ստացվել է գնորդներից
- դ) հաշվարկային հաշվից վճարվել է գնորդներին

12. Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 524, Կտ 252

- ա) հաշվարկային հաշվից վճարվել է մատակարարներին
- բ) հաշվարկային հաշվում ստացվել է գնորդներից
- գ) հաշվարկային հաշվից վճարվել է բյուջեին
- դ) հաշվարկային հաշվից վճարվել է սոցապ մարմիններին

13. Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 521, Կտ 252

- ա) մատակարարի պարտքը մարվել է հաշվարկային հաշվից
- բ) արտացոլվել են մատակարարի կողմից կատարված ծառայությունները
- գ) մատակարարի պարտքը մարվել է ընթացիկ կանխավճարի հաշվին
- դ) մատակարարի պարտքը մարվել է դրամարկղից

14. Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 521, Կտ 511

- ա) մատակարարի պարտքը մարվել է հաշվարկային հաշվից
- բ) մատակարարի պարտքը մարվել է կարճաժամկետ վարկի հաշվին
- գ) այլ կազմակերպությանը տրամադրվել է փոխառություն
- դ) մատակարարից ստացվել է փոխառություն

15. Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 511, Կտ 252

- ա) հաշվարկային հաշվում ստացվել է բանկի կարճաժամկետ վարկը
- բ) հաշվարկային հաշվում ստացվել է բանկի երկարաժամկետ վարկը
- գ) հաշվարկային հաշվից մարվել է բանկի կարճաժամկետ վարկը
- դ) հաշվարկային հաշվից մարվել է բանկի երկարաժամկետ վարկը

16. Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 527, Կտ 524

- ա) աշխատողի աշխատավարձը փոխանցվել է բանկային հաշիվ
- բ) աշխատողին հաշվարկվել է ժամանակավոր անաշխատունակության նպաստ
- գ) աշխատողի աշխատավարձից պահվել է սոցապ վճարը
- դ) աշխատողի աշխատավարձից պահվել է եկամտահարկը

17. Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 811, Կտ 525

- ա) դրամարկղից վճարվել է հիմնական արտադրության բանվորների աշխատավարձը
- բ) հաշվարկվել է աշխատավարձ հիմնական արտադրության բանվորներին
- գ) հաշվարկվել է աշխատավարձ օժանդակ արտադրության բանվորներին
- դ) կատարվել են սոցապ հատկացումներ հիմնական արտադրության բանվորների համար

18. Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 251, Կտ 252

- ա) գույքագրման ժամանակ հայտնաբերվել է կանխիկ դրամի ավելցուկ
- բ) գույքագրման ժամանակ հայտնաբերվել է կանխիկ դրամի պակասորդ
- գ) հաշվարկային հաշվից ստացվել է կանխիկ դրամ դրամարկղում
- դ) կանխիկ դրամը դրամարկղից մուտքագրվել է հաշվարկային հաշիվ

19. Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 252, Կտ 251

- ա) գույքագրման ժամանակ հայտնաբերվել է կանխիկ դրամի ավելցուկ

- բ) գույքագրման ժամանակ հայտնաբերվել է կանխիկ դրամի պակասորդ
- գ) հաշվարկային հաշվից ստացվել է կանխիկ դրամ դրամարկղում
- դ) կանխիկ դրամը դրամարկղից մուտքագրվել է հաշվարկային հաշիվ

20. Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 213, Կտ 521

- ա) գույքագրման ժամանակ հայտնաբերվել է արագամաշ առարկաների ավելցուկ
- բ) մատակարարից ապառիկ ձեռք են բերվել նյութեր
- գ) անհատույց ստացվել են արագամաշ առարկաներ
- դ) մատակարարից ապառիկ ձեռք են բերվել արագամաշ առարկաներ

21. Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 211, Կտ 252

- ա) մատակարարից ձեռք են բերվել նյութեր, որոնց դիմաց վճարվել է հաշվարկային հաշվից
- բ) մատակարարից ապառիկ ձեռք են բերվել նյութեր
- գ) անհատույց ստացվել են նյութեր
- դ) վաճառվել են նյութեր

ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Խնդիր.

Որոշել թողարկված արտադրատեսակների ինքնարժեքը.

Կազմակերպությունում արտադրվում է 3 տեսակի արտադրանք.

Ա Բ Գ

Արտադրվել է 45 35 24

Անավարտ արտադ. մացորդը 2500 1200 2200

Հաշվետու ժամանակաշրջանի ծախսերը՝

Նյութական 32000 25300 18400

Աշխատանքային 18600 15000 14000

Անուղղակի ծախսերը կազմել է 55000 դրամ :

Խնդիր.

Հաշվետու եռամսյակի սկզբին հումքի մնացորդը կազմում էր 20կգ՝ 1կգ-ի գինը 34 դրամ: Հաշվետու եռամսյակի ընթացքում կազմակերպությունում տեղի է ունեցել հումքի հետևյալ շարժը.

10.01.2020թ.	մուտք՝ 100կգ 35 դրամով
25.01.2020թ.	ելք՝ 20կգ
15.02.2020թ.	մուտք՝ 80կգ 35.5 դրամով
20.02.2020թ.	ելք՝ 90կգ
02.03.2020թ.	մուտք՝ 50կգ 40 դրամով
27.03.2020թ.	ելք 95կգ

Պահանջվում է որոշել եռամսյակի ընթացքում ծախսված հումքի ինքնարժեքը ֆիֆո և միջին կշռված եղանակով:

1. Կազմակերպությունում կիրառվում է պաշարների ինքնարժեքի հաշվառման ԱՄԱԵ/ՖԻՖՈ/մեթոդը: Ա նյութի սկզբնական մնացորդը 60կգ է. 1 կգ-ի արժեքը 120 դրամ: Եռամսյակի ընթացքում ստացվել է 290կգ՝ 135 դրամով, ծախսվել է 310 կգ: Եռամսյակի ընթացքում ծախսված նյութի ինքնարժեքը կազմել է.

ա/ 40 950 դրամ

բ/ 4 800 դրամ

գ/ 41 550 դրամ

դ/ 46 350 դրամ

ե/ 5 400 դրամ

2. Կազմակերպությունում կիրառվում է պաշարների ինքնարժեքի հաշվառման ԱՄԱԵ/ՖԻՖՈ/մեթոդը: Ա նյութի սկզբնական մնացորդը 110կգ է. 1 կգ-ի արժեքը 130 դրամ: Եռամսյակի ընթացքում ստացվել է 430 կգ՝ 150 դրամով. դրամով, և 240կգ՝ 180 դրամով: Ծախսվել է 420 կգ: Եռամսյակի վերջում նյութի մնացորդի ինքնարժեքը կազմել է.

ա/ 65 700 դրամ

բ/ 60 500 դրամ

գ/ 58 200 դրամ

դ/ 64 700 դրամ

ե/ 56 300 դրամ

3. Կազմակերպությունում կիրառվում է պաշարների ինքնարժեքի հաշվառման ԱՄԱԵ/ՖԻՖՈ/մեթոդը: Ա նյութի սկզբնական մնացորդը 180կգ է. 1 կգ-ի արժեքը 120 դրամ: Եռամսյակի ընթացքում ստացվել է 150կգ՝ 100 դրամով.

Ծախսվել է 170կգ:Եռամսյակի ընթացքում ծախսված նյութի ինքնարժեքը կազմել է.

ա/ 21 600 դրամ

բ/ 20 400 դրամ

գ/ 16 200 դրամ

դ/ 36 600րամ

ե/ 17 000 դրամ

4.Կազմակերպությունում կիրառվում է պաշարների ինքնարժեքի միջին կշռված արժեքի մեթոդը:Ա նյութի սկզբնական մնացորդը 90կգ է.1 կգ-ի արժեքը 140 դրամ:Եռամսյակի ընթացքում ստացվել է 440 կգ՝150 դրամով. և 190 կգ՝170 դրամով,ծախսվել է 460 կգ:Եռամսյակի վերջում ծախսված նյութի ինքնարժեքը կազմել է.

ա/ 40 000 դրամ

բ/ 41 000 դրամ

գ/40 040դրամ

դ/ 68 600րամ

ե/ 70 840 դրամ

5.Կազմակերպությունում կիրառվում է պաշարների ինքնարժեքի միջին կշռված արժեքի մեթոդը:Ա նյութի սկզբնական մնացորդը 50կգ է.1 կգ-ի արժեքը 100 դրամ:Եռամսյակի ընթացքում ստացվել է 350 կգ՝120 դրամով,ծախսվել է 380 կգ:Եռամսյակի ընթացքում ծախսված նյութի ինքնարժեքը կազմել է.

ա/ 44 650 դրամ

բ/ 42 000 դրամ

գ/ 2 350 դրամ

դ/ 45 600րամ

ե/ 38 000 դրամ

6. Կազմակերպությունում կիրառվում է պաշարների ինքնարժեքի միջին կշռված արժեքի մեթոդը: Եռամսյակի ընթացքում Ա նյութից ստացվել է 300 կգ՝ 240 դրամով, և 200կգ՝ 250 դրամով: ծախսվել է 420 կգ: Եռամսյակի ընթացքում ծախսված նյութի ինքնարժեքը կազմել է.

ա/ 102 480 դրամ

բ/ 19 520 դրամ

գ/ 122 000 դրամ

դ/ 100 800 դրամ

ե/ 105 000 դրամ

7. Առաջադրանք

Պահանջվում է ստորև բերված օրինակի հիման վրա կատարել ելքագրված նյութերի գնահատումը՝ կիրառելով նյութերի ծախսի գնահատման վերը թվարկված մեթոդները.

Ցուցանիշներ	Քանակ	Գին	Գումար
Նյութերի մնացորդը եռամսյակի սկզբում	100	400	
Նյութերի մուտք՝			
05.01	70	410	
10.01	40	400	
15.02	60	450	
20.02.	100	430	
25.03.	80	420	
31.03.	50	450	
Ընդամենը	400	-	
Ընդամենը մնացորդի հետ	500	-	
Նյութերի ծախսը ամսվա ընթացքում	370		
Նյութերի մնացորդը ամսվա վերջին	130		

Աղյուսակում բերված տվյալների հիման վրա գնահատեք 130 միավորի նյութի մնացորդը ամսվա վերջում՝ վերը նշված տարբեր մեթոդներով և հաշվարկեք ելքագրված 370 միավոր նյութի ինքնարժեքը, օգտագործելով ապրանքային հաշվեկշռի Բանաձևը (ելք = սկզբնական մնացորդ + մուտք –

վերջնական մնացորդ): Բացելապրանքա-
նյութական արժեքների գրանցամատյանը,
կատարել գրանցումներ.

Խնդիր 8

Պահանջվում է որոշել վաճառված պատրաստի
արտադրանքի ինքնարժեքը և ձևակերպել վաճառքի հետ
կապված գործառնությունները: Արտադրական պաշարները
գնահատվում են միջին կշռված արժեքով:

Ցուցանիշներ	Աարտադրատեսակ			Բարտադրատեսակ		
	Քանակը, հատ	Միավորի ինքնարժե քը, դրամ	ընդհան. ինքնարժ., դրամ	Քանակը, հատ	Միավորի ինքնարժե քը, դրամ	ընդհ. ինքնարժե քը, դրամ
մնացորդ. 1.01	100	2560		200	1650	
Թողարկվել է եռամսյակի ընթացքում	500	2596		800	1625	
Ընդամենը մնացորդի հետ	600	X		1000	X	
Իրացվել է եռամսյակի ընթացքում	400			900		
Մնացորդը առ 31.03						

Առաջադրանք 9.

Ստորև բերված տվյալների հիման վրա որոշել և ձևակերպել
իրացված արտադրանքի ինքնարժեքը, արտադրանքի վաճառքից
ճանաչված հասույթը, հասույթի ճշգրտումը՝ կապված իրացված
արտադրանքի վերադարձման հետ, իրացված և վերադարձված
արտադրանքին վերաբերող ԱԱՀ գումարները:

Տվյալներ

Ցուցանիշներ	Աարտադրատեսակ			Բարտադրատեսակ		
	քանակը, հատ	Միավորի ինքնարժեքը, դրամ	միավորի գինը, առանց ԱԱՀ	քանակը, հատ	միավորի ինքնարժեքը, դրամ	միավորի գինը, առանց ԱԱՀ
Իրացվել է հաշվետու եռամսյակում	250	8500	10000	800	12500	14500
Վերադարձվել է գնորդների կողմից	20	8500	10000	50	12500	14500

Տալ ձևակերպումների բացատրությունը

1. Ինչ^օ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 211, Կտ 228
2. Ինչ^օ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 211, Կտ 812
3. Ինչ^օ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 215, Կտ 711
4. Ինչ^օ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 216, Կտ 217
5. Ինչ^օ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 211, Կտ 521
6. Ինչ^օ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 211, Կտ 252
7. Ինչ^օ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 211, Կտ 611
8. Ինչ^օ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 211, Կտ 621
9. Ինչ^օ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 211, Կտ 614
10. Ինչ^օ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 211, Կտ 421
11. Ինչ^օ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 714, Կտ 211
12. Ինչ^օ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 211, Կտ 541

13. Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 711, Կտ 217 (ճշտանցման եղանակով)

14. Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 213, Կտ 521

15. Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 216, Կտ 521

16. . Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 216, Կտ224

Խնդիր

Կազմել նյութերի մուտքագրման գործառնությունների ձևակերպումները:

h/h	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը/դրամ/
1	Մատակարարից ձեռք է բերվել պողպատ, որի ընդունման ժամանակ հայտնաբերվել է պակասորդ, որի գումարով մատակարարին ներկայացվել է բողոքարկում Փաստացի մուտքագրվել է ԱԱՀ Ընդամենը	60000 260000
2.	Հաշվարկային հաշվից վճարվել է լաքերի և ներկերի գործարանից ստացված ներկերի գումարը ա/արժեքը գնման գներով բ/ԱԱՀ Ընդամենը	400000
3	Ներկերի տեղափոխման ծախսումները վճարվել են հաշվետու անձի կողմից ա/տեղափոխման սակագինը բ/ԱԱՀ Ընդամենը	35000

4	Հաշվետու անձի կողմից շինանյութերի մանրածախ խանութից ձեռք են բերվել գործիքներ ա/արժեքը գնման գներով բ/ԱԱՀ ընդամենը	144000
5	Կազմակերպությունից ձեռք է բերվել դիզելային վառելիք ա/արժեքը գնման գներով բ/ԱԱՀ Ընդամենը	500000
6	Հաշվարկային հաշվից վճարվել է վառելիքի տեղափոխման ծախսումները ա/սակագինը բ/ԱԱՀ Ընդամենը	50000
7	Մատակարարից ձեռք են բերվել գունավոր մետաղներ, որոնց դիմաց վճարումը պետք է կատարվի 10 օրվա ընթացքում ա/արժեքը գնման գներով բ/երկաթուղային տարիֆը գ/ԱԱՀ Ընդամենը	560000 80000
8	Հաշվետու անձի կողմից վճարվել է նյութերի բեռնման-բեռնաթափման ծախսումները	120000
9	Այլ կազմակերպությունից անհատույց ստացվել են կիսաապատրաստուքներ	140000
10	Պահեստ են մուտքագրվել սեփական գործիքային արտադրամասի կողմից թողարկված գործիքները, որոնց օգտագործման ժամկետները սահմանվել է 10 ամիս	470000

ԹԵՍԵՆԸ

1. Դրամարկղ է մուտքագրվել արտադրանքի իրացումից ստացված հասույթը՝ 645 հազ.դրամ, ԱԱՀ-ն՝ 20%, իսկ առաքված արտադրանքի ինքնարժեքը կազմել է 550 հազ. դրամ: Վաճառվող արտադրանքի տեղափոխման համար տրանսպորտային կազմակերպությանը վճարվել է 50 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանի շահույթը կամ վնասը կազմել է.

ա) շահույթ՝ 45 հազ.դրամ

բ) վնաս՝ 45 հազ.դրամ

գ) շահույթ՝ 174 հազ.դրամ

դ) վնաս՝ 174 հազ.դրամ

2. Հաշվարկային հաշվում մուտքագրվել է արտադրանքի իրացումից ստացված հասույթը՝ 400 հազ.դրամ, ԱԱՀ-ն՝ 80 հազ. դրամ, իսկ առաքված արտադրանքի ինքնարժեքը կազմել է 450 հազ. դրամ: Վաճառվող արտադրանքի տեղափոխման համար տրանսպորտային կազմակերպությանը վճարվել է 5 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանի շահույթը կամ վնասը կազմել է.

ա) շահույթ՝ 55 հազ.դրամ

բ) վնաս՝ 55 հազ.դրամ

գ) շահույթ՝ 25 հազ.դրամ

դ) վնաս՝ 25 հազ.դրամ

3. Հաշվարկային հաշվում մուտքագրվել է արտադրանքի իրացումից ստացված հասույթը՝ 900 հազ.դրամ, ԱԱՀ-ն՝ 180 հազ. դրամ, իսկ առաքված արտադրանքի ինքնարժեքը կազմել է 920 հազ. դրամ: Վաճառվող արտադրանքի տեղափոխման համար տրանսպորտային կազմակերպությանը վճարվել է 25 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանի շահույթը կամ վնասը կազմել է.

ա) շահույթ՝ 45 հազ.դրամ

բ) վնաս՝ 45 հազ.դրամ

գ) շահույթ՝ 225 հազ.դրամ

դ) վնաս՝ 225 հազ.դրամ

4. Դրամարկղ է մուտքագրվել արտադրանքի իրացումից ստացված հասույթը՝ 650 հազ.դրամ, ԱԱՀ-ն՝ 130 հազ. դրամ, իսկ առաքված

արտադրանքի ինքնարժեքը կազմել է 470 հազ. դրամ: Վաճառվող արտադրանքի տեղափոխման համար տրանսպորտային կազմակերպությանը վճարվել է 15 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանի շահույթը կամ վնասը կազմել է.

- ա) շահույթ՝ 165 հազ.դրամ
- բ) վնաս՝ 165 հազ.դրամ
- գ) շահույթ՝ 295 հազ.դրամ
- դ) վնաս՝ 295 հազ.դրամ

5. Գույքագրման ժամանակ հայտնաբերված պատրաստի արտադրանքի պակասորդը՝

- ա) ճանաչվում է որպես եկամուտ
- բ) ճանաչվում է որպես ծախս
- գ) ճանաչվում է որպես դեբիտորական պարտք
- դ) ճանաչվում է որպես կրեդիտորական պարտք

6. Նյութերի ստացման ժամանակ պակասորդի հայտնաբերման դեպքում՝

- ա) մատակարարի պարտքը նվազեցվում է
- բ) մատակարարին վճարվում է հաշիվ-ապրանքագրում նշված գումարը
- գ) պակասորդը ավելացվում է մուտքագրված նյութերի ինքնարժեքին
- դ) մատակարարին ներկայացվում է բողոքարկում

7. Համաձայն ՀՀՀՄ 2 ստանդարտի, պաշարների իրացման զուտ արժեքի բարձրացման դեպքում նախկինում ճանաչված նվազեցումների հակադարձումը.

- ա) ճանաչվում է որպես տվյալ ժամանակաշրջանի ծախս
- բ) հանվում է պաշարների ինքնարժեքից
- գ) ավելացվում է պաշարների ինքնարժեքին
- դ) ճանաչվում է որպես տվյալ ժամանակաշրջանի եկամուտ

8. Պաշարների ինքնարժեքի իջեցումը մինչև իրացման զուտ արժեքը.

- ա) գումարվում է պաշարների ինքնարժեքին
- բ) ճանաչվում է հաշվետու ժամանակաշրջանի եկամուտ
- գ) ճանաչվում է ծախս հաշվետու ժամանակաշրջանում
- դ) հանվում է պաշարների արժեքից

9. Արտադրանքի վաճառքից հասույթը ճանաչվում է, երբ՝

- ա) գնորդին է փոխանցվում վաճառված արտադրանքի նկատմամբ վերահսկողությունը, որի հետ կապված տնտեսական օգուտները

կիոսեն կազմակերպություն, սակայն տվյալ պահին հասույթի գումարը հնարավոր չէ արժանահավատորեն չափել

բ) արտադրանքը առաքվում է գնորդին

գ) գնորդին է փոխանցվում վաճառված արտադրանքի նկատմամբ վերահսկողությունը, որի հետ կապված տնտեսական օգուտները կիոսեն կազմակերպություն և հասույթի գումարը կարող է արժանահավատորեն չափվել

դ) արտադրանքը դուրս է գրվում պահեստից

10. Արտադրանքի վաճառքից հասույթը .

ա) սովորական գործունեությունից առաջացող տնտեսական օգուտների համախառն արտահոսքն է, որը հանգեցնում է սեփական կապիտալի նվազման

բ) կազմակերպության շահույթն է, որը վերագրվում է սեփական կապիտալին

գ) սովորական գործունեությունից առաջացող տնտեսական օգուտների համախառն ներհոսքն է, որը հանգեցնում է սեփական կապիտալի աճի

դ) կազմակերպության օգուտն է, որը բաշխվում է բաժնետերերի միջև

11. Գույքագրման ժամանակ հայտնաբերված պատրաստի արտադրանքի ավելցուկը`

ա) ճանաչվում է որպես եկամուտ

բ) ճանաչվում է որպես ծախս

գ) ճանաչվում է որպես դեբիտորական պարտք

դ) ճանաչվում է որպես կրեդիտորական պարտք

12. Համաձայն ՀՀՀՀՍ 2 «Պաշարներ» ստանդարտի պաշարների ինքնարժեքի մեջ ներառվում են.

ա) գնման գինը

բ) վաճառքի ծախսումները

գ) ձեռքբերման ծախսումները, վերամշակման ծախսումները և պաշարները գտնվելու վայր և պատշաճ վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումները

դ) պաշարների պահպանման ծախսումները

13. Ի՞նչ արժեքով կարող են չափվել պաշարները.

ա) սկզբնական կամ վերագնահատված

բ) իրական կամ մնացորդային

գ) ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով

դ) ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից առավելագույնով

14. Վաճառված արտադրանքի ինքնարժեքը.

- ա) ճանաչվում է որպես եկամուտ
- բ) ճանաչվում է որպես ծախս
- գ) ճանաչվում է որպես դեբիտորական պարտք
- դ) ճանաչվում է որպես կրեդիտորական պարտք

15. Վաճառված արտադրանքի ինքնարժեքը ճանաչվում է որպես ծախս .

- ա) այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրա հետ կապված հասույթը
- բ) այն ժամանակաշրջանում, երբ ստացվում է վճարը գնորդից
- գ) պահեստից առաքելու պահին
- դ) գնորդին հաշիվ-ապրանքագիրը ուղարկելու պահին

16. Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպության կատարած ծախսումների մասին կան հետևյալ տվյալները. անավարտ արտադրության տարեսկզբի մնացորդը կազմել է 500 հազ.դրամ, հաշվետու տարվա ուղղակի ծախսումները` 25 000 հազ.դրամ, հաշվետու տարվա անուղղակի ծախսումները` 3 000 հազ.դրամ, անուղղելի խոտանի ինքնարժեքը` 50 հազ.դրամ, անավարտ արտադրության տարեվերջի մնացորդը` 425 հազ.դրամ: Թողարկված արտադրանքի փաստացի ինքնարժեքը հավասար է.

- ա) 28 375 հազ.դրամ
- բ) 28 975 հազ.դրամ
- գ) 28 225 հազ.դրամ
- դ) 28 025 հազ.դրամ

17. Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպության կատարած ծախսումների մասին կան հետևյալ տվյալները. անավարտ արտադրության տարեսկզբի մնացորդը կազմել է 800 հազ.դրամ, հաշվետու տարվա ուղղակի ծախսումները` 15 000 հազ.դրամ, հաշվետու տարվա անուղղակի ծախսումները` 2 000 հազ.դրամ, անուղղելի խոտանի ինքնարժեքը` 5 հազ.դրամ, անավարտ արտադրության

տարեվերջի մնացորդը՝ 520 հազ.դրամ: Թողարկված արտադրանքի փաստացի ինքնարժեքը հավասար է.

ա) 18 525 հազ.դրամ

բ) 18 325 հազ.դրամ

գ) 17 525 հազ.դրամ

դ) 17 275 հազ.դրամ

18. Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպության կատարած ծախսումների մասին կան հետևյալ տվյալները. անավարտ արտադրության տարեսկզբի մնացորդը կազմել է 800 հազ.դրամ, հաշվետու տարվա ուղղակի ծախսումները՝ 35 000 հազ.դրամ, հաշվետու տարվա անուղղակի ծախսումները՝ 5 000 հազ.դրամ, անուղղելի խոտանի ինքնարժեքը՝ 50 հազ.դրամ, անավարտ արտադրության տարեվերջի մնացորդը՝ 785 հազ.դրամ: Թողարկված արտադրանքի փաստացի ինքնարժեքը հավասար է.

ա) 39 965 հազ.դրամ

բ) 38 025 հազ.դրամ

գ) 39 975 հազ.դրամ

դ) 38 575 հազ.դրամ

ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Առաջադրանք

1. Ա կազմակերպության դեբիտորական պարտքը կազմում է 630000 դրամ, որը առաջացել է հունվարի 25-ից և մինչև հաշվետու տարվա օգոստոսի 23-ը գնորդը չի կատարել վճարում: Ինչ տոկոսադրույք և հաշվապահական ձևակերպում կտրվի պահուստի ստեղծման համար:

2. Երբ է տրվում հետևյալ ձևակերպումը. Դտ 252 Կտ 614

3. Անհուսալի դեբիտորական պարտքերի կորստի պահուստի ձևավորման հաշվառումը կազմակերպություններում որ օրենքով է կարգավորվում.

4. Ինչ որոշմամբ է վավերացվում դեբիտորական պարտքերի կորուստների պահուստաֆոնդը

5. Ինչ է դեբիտորական պարտքը

6. Ինչպես է որոշվում դեբիտորական պարտքերի հաշվեկշռային մնացորդը

7. Երբ է Դեբիտորական պարտքը դուրս գրվում հաշվեկշռից

8. Երբ սահմանված չէ դեբիտորական պարտքի մարման ժամկետ, ինչ ժամկետ է հաշվի առնվում.

9. Ինչ հաշիվ է 223 հաշիվը

10. Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված դեբիտորական պարտքերը որտեղ են արտացոլվում են

11. Եթե դեբիտորական պարտքի գումարը 220 000 դրամ է, կետանցված օրերը՝ 230 օր, ինչպես է կատարվում պահուստին մասհանումը.

12. Գնորդին սնանկ ճանաչելու դեպքում ինչ ձևակերպմամբ է դուրս գրվում դեբիտորական պարտքը հաշվեկշռային հաշվից

13. Դեբիտորական պարտքերը հաշվային պլանի որ դասում, որ խմբում և որ աջաջին կարգի հաշիվներով են արտացոլվում

14. Դեբիտորական պարտքի մնցորդը հաշվետու տարվա վերջին կազմել է 428 000 դրամ: Կազմակերպության քաղակականության հիման վրա պետք է հաշվարկվի Յտոկոս պահուստին մասհանում կատարելու համար: Որքան կկազմի պահուստին կատարվող հատկացումը և ինչ հաշվապահական ձևակերպում կտրվի:

Խնդիր 1. 2017թ. հունվարի 1 - ի դրությամբ «Անահիտ» ՍՊԸ – ի առևտրական դեբիտորական պարտքերի հաշվի սկզբնական մնացորդը 680 000 դրամ է, իսկ կասկածելի պարտքերի պահուստի հաշվի մնացորդը - 30 000 դրամ: Տարվա ընթացքում մինչև 2017թ. դեկտեմբերի 31 – ը «Անահիտ» ՍՊԸ կատարում է 3 540 000 դրամի ապառիկ վաճառքներ, ԱԱՀ 20% - 708 000 դրամ, որոնց փաստացի ինքնարժեքը կազմում է 3 000 000 դրամ և իր դեբիտորներից ստացել է 4 450 000 դրամի դրամական միջոցներ:

2017թ. դեկտեմբերի 31 – ի դրությամբ «Անահիտ» ՍՊԸ – ի հաշվապահությունը ուսումնասիրելով իր դեբիտորական պարտքերի ցուցակը պարզում է, որ դեբիտորներից մեկը սնանկ է ճանաչվել և հավանաբար չի կարողանա մարել 20 000 դրամ գումարի դեբիտորական պարտքը: Հետևաբար՝ այն որպես անհուսալի պետք է դուրս գրվի: «Անահիտ» ՍՊԸ – ի դեկավարությունը որոշում է նաև անհուսալի պարտքը դուրս գրելուց հետո, ստեղծել պահուստ, դեբիտորական պարտքերի 8% - ի չափով:

Պահանջվում է որոշել դեբիտորական պարտքերի, կասկածելի պարտքերի պահուստի և անհուսալի պարտքերի գծով

ծախսերի հաշվի մնացորդները 2017թ. դեկտեմբերի 31 - ի դրությամբ՝ ավարտված տարվա համար:

Խնդիր 2.

2015թ. հունվարի 1 - ի դրությամբ առևտրական դեբիտորական պարտքերի մնացորդը կազմել է 500 000 դրամ, իսկ կասկածելի պարտքերի պահուստի մնացորդը՝ 70 000 դրամ: 2015թ. ընթացքում գնորդներին ապառիկ վաճառվել է 2 500 000 դրամի պատրաստի արտադրանք, ԱԱՀ 20% - 500 000 դրամ: Վաճառված արտադրանքի ինքնարժեքը կազմում է 2 000 000 դրամ: Գնորդներն իրենց պարտքի դիմաց վճարել են 2 800 000 դրամ:

2015թ. դեկտեմբերի 31 - ի դրությամբ ժամկետանց դեբիտորական պարտքերի վերլուծությունից պարզվել է, որ անհուսալի են համարվում դեբիտորներից երկուսը, որոնցից առաջինի պարտքի գումարը կազմում է 20 000 դրամ, որը ունի 360 օրվա վաղեմության ժամկետ, իսկ երկրորդի պարտքը 30 000 դրամ է, որի վաղեմության ժամկետը կազմում է 402 օր: Կասկածելի դեբիտորները կազմում են դեբիտորական պարտքի մնացորդի 2 % - ր:

Պահանջվում է որոշել կասկածելի դեբիտորական պարտքերի պահուստի գումարը 2016թ. հունվարի 1 - ի դրությամբ:

2016թ. կազմակերպությունը ապառիկ վաճառել է 4 500 000 դրամի արտադրանք, ԱԱՀ 20% - 900 000 դրամ: Վաճառված արտադրանքի ինքնարժեքը կազմել է 3 800 000 դրամ: Կազմակերպությունը իր դեբիտորներից ստացել է 3 600 000 դրամ գումար: Ըստ հաշվային քաղաքականության, 2016թ. դեկտեմբերի 31 - ի դրությամբ կասկածելի պարտքերի ծածկման պահուստը պետք է կազմի դեբիտորական պարտքի մնացորդի 3 % - ր:

Պահանջվում է ճշտել դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի մնացորդը 2016թ. դեկտեմբերի 31 – ի դրությամբ և որոշել 221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով» հաշվի հաշվեկշռային արժեքը:

Առաջադրանք

1. Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի հակադարձումը արտացոլվում է՝

2. Ինչ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 223 Կտ 614

3. Ինչ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ714կտ 223

4. Որոշել դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստին կատարվող հատկացումները, եթե դեբիտորական պարտքը կետանցվել է 78 օր

5. Ինչ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ222 կտ 614

6. Ինչպես է ձևակերպվում նյութական վնասի փոխհատուցմամբ դեբիտորական պարտքի արտացոլումը

7. Ինչպես է ձևակերպվում ստացվելիք տոկոսների գծով դեբիտորական պարտքերի արտացոլումը

8. Երբ է դեբիտորական պարտքը համարվում կետանցված

Առաջադրանք

Ստորև բերված տվյալների հիման վրա որոշել «Ա» կազմակերպության դեբիտորական պարտքի մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

«Ա» կազմակերպության դեբիտորական պարտքերի մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին կազմել է 130 000 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում գնորդներին առաքվել է 220 000 հազ. դրամի արտադրանք՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը: Պայմանագրով նախատեսված ապրանքների որոշակի խմբաքանակի որակի չափանիշների խախտման պատճառով գնորդների մի մասը հետ են վերադարձրել ընդհանուր գումարով 45 000 հազ. դրամի արտադրանք, իսկ 50 000 հազ. դրամի պարտք ունեցող մյուս գնորդներին կազմակերպության կողմից տրվել է գների իջեցման 8% զեղչ: Դեբիտորները մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտը ընդհանուր առմամբ մատակարար կազմակերպության հաշվարկային հաշիվ են փոխանցել 70 000 հազ. դրամ:

Առաջադրանք

31.12.2019թ.վերջին վաճառքի գծով դեբիտորական պարտքերի մնացորդների վերաբերյալ ըստ կետանցված օրերի ունենք հետևյալ տեղեկատվությունը.

Գնորդ «Ա», պարտքի գումարը 150 000 դրամ, կետանցված օրերը` 65 օր

Գնորդ «Բ», պարտքի գումարը 300 000 դրամ, կետանցված օրերը` 165 օր.

Գնորդ «Գ», պարտքի գումարը 100 000 դրամ, կետանցված օրերը` 200 օր

Գնորդ «Դ», պարտքի գումարը 200 000 դրամ, կետանցված օրերը` 305 օր.

Կատարել անհուսալի դեբիտորական պարտքերի դուրս գրման կորստի պահուստին կատարված հատկացման հաշվարկը և ճանաչված ծախսը վերագրել և շահույթին կամ վնասին

2020թ, հունիսին դատարանի կողմից «Դ» գնորդին սնանկ ճանաչելու պատաճառով կետանցված դեբիտորական պարտքը դուրս է գրվում:

«Ա, «Բ» և «Գ» գնորդները ամբողջությամբ մարել են իրենց նախորդ տարվա պարտքերը:

Հուլիսի 31-ին «Ա» գնորդին առաքվել է 170 000 դրամի արտադրանք, որի մարման ժամկետը ըստ պայմանագրի նախատեսված էր 30 օր, սակայն մինչև տարվա վերջ գումարը չի վճարվել:

Պահանջվում է ճշտել դեբիտորական պարտքերի պահուստի մնացորդը և որոշել վաճառքի գծով դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը:

ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

Առաջադրանք

Ստորև բերված տվյալների հիման վրա ձևակերպել հողի օգտագործման իրավունքի ձեռք բերումը և որոշել ու ձևակերպել հաշվետու տարվա ամորտիզացիան

Տվյալներ. «Միգմա» ՓԲԸ-ի հիմնադիր փաստաթղթերի համաձայն բաժնետերերի փոխադարձ համաձայնությամբ բաժնետերերից մեկը կանոնադրական կապիտալում իր բաժնեմասի դիմաց տրամադրել է իրեն սեփականությունը հանդիսացող հողամասի օգտագործման իրավունքը: Կազմակերպությունը մտադիր է օգտագործել հողամասը ջերմոցային տնտեսություն կազմակերպելու համար: Հողամասի օգտագործման իրավունքը գնահատվել է բաժնետերերի կողմից համաձայնեցված արժեքով՝ 1 200 000 դրամ: Հողամասի օգտագործման իրավունքը ուժի մեջ է մտել 200 թ. մայիսի 30-ից: Ակտիվի օգտակար ծառայությունը սահմանվել է 10 տարի: Ամորտիզացիան հաշվարկվում է գծային եղանակով:

Առաջադրանք

Պահանջվում է հաշվարկել ոչ նյութական ակտիվի ամորտիզացիան.

«Ա» կազմակերպությունը 2017թ. մարտին «Բ» կազմակերպությունից ձեռք է բերել արտոնագիր՝ նմանատիպ արտադրանք թողարկելու համար՝ վճարելով 500.000 դրամ: Արտոնագրի համար վճարված գումարը ճանաչվել է որպես ոչ նյութական ակտիվ և հաշվային քաղաքականությամբ որոշվել, որ այն պետք է ամորտիզացվի 5 տարվա ընթացքում՝ գծային հավասարաչափ մեթոդով:

2022թ. մարտի վերջին լրանում է օգտակար ծառայության ժամկետը, և դադարեցվում է ամորտիզացիայի հաշվարկը:

Մգ=Սկզբնական արժեք /Օգտակար ծառայության ժամկետ

Տարիներ	Սկզբնական արժեք	Տարեկան մաշվածություն	Կուտակված մաշվածություն	Հաշվեկշռային արժեք
2017թ.				
2018թ.				
2019թ.				
2020թ.				
2021թ.				
2022թ.				

ԱՌՍՁԱԴՐԱՆՔ

Ինչ է նշանակում հետևյալ ձևակերպումը

1. Դտ 131 կտ 521
2. Դտ 132 կտ 131
3. Դտ131Կտ311
4. Դտ 131 Կտ611
5. Դտ 713 Կտ132
6. Դտ 131 Կտ 152
7. Դտ813 Կտ 132
8. Դտ 131 Կտ 421

Ինչպես է ձևակերպվում գործառնությունը

1.նչ նյութական ակտիվը ձեռք է բերվել նյութերի հետ փոխանակմամբ

2.նչ նյութական ակտիվը ձեռք է բերվել հիմնական միջոցների հետ փոխանակմամբ

3.հաշվարկվել է ամորտիզացիա լիցենզիաների համար

4.դուրս է գրվել վաճառված համակարգչային ծրագրի հաշվեկշռային արժեքը

5.մատակարարից ձեռք են բերվել ոչ նյութական ակտիվներ,որոնց դիմաց վճարվել է հաշվարկային հաշվից

6.հաշվետու անձը վճարել է ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գործարքի հետ կապված ծախսումները

7.նախապես վճարված կանխավճարի դիմաց ձեռք են բերվել ոչ նյութական ակտիվներ

8.Ինչ արժեքով կարտացուլի արտոնագիրը հաշվառման մեջ,եթե կազմակերպությունը ձեռք է բերել դա 450 000դրամ գումարով:հաշվետու անձին տրամադրվել է 90 000դրամ,որից նա 25 000 դրամ վճարել է խորհրդատվական ծառայության և 15 000 դրամ իրավաբանական ծառայության համար.

ա/540 000դրամ

բ/490 000դրամ

գ/450 000դրամ

դ/50 000 դրամ

ե/470 000

9.Ինչ արժեքով կարտացուլի արտոնագիրը հաշվառման մեջ,եթե կազմակերպությունը ձեռք է բերել դա 350 000դրամ գումարով:հաշվետու անձին տրամադրվել է 50000դրամ,որից նա

20 000 դրամ վճարել է խորհրդատվական ծառայության և 15 000 դրամ ՝ իրավաբանական ծառայության համար.

ա/385 000դրամ

բ/435 000դրամ

գ/400 000դրամ

դ/370 000 դրամ

ե/365 000

10.Ինչ արժեքով կարտացուլվի լիցենզիան հաշվառման մեջ,եթե կազմակերպությունը ձեռք է բերել դա 720 000դրամ գումարով,ներառյալ ԱԱՀ, 50 000 դրամ վճարել է խորհրդատվական ծառայության և 25 000 դրամ ՝ իրավաբանական ծառայության համար.ա/600 000դրամ

բ/650 000դրամ

գ/675 000դրամ

դ/770 000 դրամ

ե/795 000

11.Կազմակերպությունում կիրառվում է ոչ նյութական ակտիվի ամորտիզացիայի հաշվարկման գծային հավասարաչափ մեթոդը:Արտոնագրի սկզբնական արժեքը 220 000դրամ է,մնացորդային արժեքը ՝ 0,օգտակար ծառայության ժամկետը 10 տարի:Օգտակար ծառայության ութերորդ տարվա վերջին արտոնագրի հաշվեկշռային արժեքը կկազմի.

ա/44 000 դրամ

բ/220 000 դրամ

գ/176 000դրամ

դ/22 000 դրամ

ե/100 000 դրամ

12. Կազմակերպությունում կիրառվում է ոչ նյութական ակտիվի ամորտիզացիայի հաշվարկման գծային հավասարաչափ մեթոդը: Արտոնագրի սկզբնական արժեքը 500 000դրամ է, մնացորդային արժեքը՝ 0, օգտակար ծառայության ժամկետը 10 տարի: Օգտակար ծառայության ութերորդ տարվա վերջին արտոնագրի հաշվեկշռային արժեքը կկազմի.

ա/100 000 դրամ

բ/50 000 դրամ

գ/116 000դրամ

դ/132 000 դրամ

ե/400 000 դրամ

13. Կազմակերպությունում կիրառվում է ոչ նյութական ակտիվի ամորտիզացիայի հաշվարկման գծային հավասարաչափ մեթոդը: Արտոնագրի սկզբնական արժեքը 520 000դրամ է, մնացորդային արժեքը՝ 40 000, օգտակար ծառայության ժամկետը 8 տարի: Օգտակար ծառայության հինգերորդ տարվա վերջին արտոնագրի կուտակված ամորտիզացիան կկազմի.

ա/480 000 դրամ

բ/325 000 դրամ

գ/300 000դրամ

դ/220 000 դրամ

ե/195 000 դրամ

14. Կազմակերպությունում կիրառվում է ոչ նյութական ակտիվի ամորտիզացիայի հաշվարկման նվազող մնացորդի մեթոդը: Արտոնագրի սկզբնական արժեքը 500 000դրամ է, մնացորդային արժեքը՝ 0, արագացման գործակիցը՝ 2, օգտակար ծառայության ժամկետը 10 տարի: Օգտակար ծառայության երկրորդ տարվա վերջին արտոնագրի հաշվեկշռային արժեքը կկազմի.

ա/320 000 դրամ

բ/ 180 000 դրամ

գ/400 000դրամ

դ/220 000 դրամ

ե/100 000 դրամ

15. Կազմակերպությունում կիրառվում է ոչ նյութական ակտիվի ամորտիզացիայի հաշվարկման նվազող մնացորդի մեթոդը: Արտոնագրի սկզբնական արժեքը 1 200 000 դրամ է, մնացորդային արժեքը՝ 0, արագացմա գործակիցը՝ 2, օգտակար ծառայության ժամկետը 10 տարի: Օգտակար ծառայության

Երկրորդ տարվա վերջին արտոնագրի հաշվեկշռային արժեքը կկազմի.

ա/240 000 դրամ

բ/ 192 000 դրամ

գ/432 000դրամ

դ/768 000 դրամ

ե/960 000 դրամ

ԹԵՍԵՐ

Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Ղտ 131, Կտ 521

- ա) գույքագրման ժամանակ հայտնաբերվել է ոչ նյութական ակտիվների ավելցուկ
- բ) գույքագրման ժամանակ հայտնաբերվել է ոչ նյութական ակտիվների պակասորդ
- գ) անհատույց ստացվել են ոչ նյութական ակտիվներ
- դ) այլ կազմակերպությունից ապառիկ ձեռք են բերվել ոչ նյութական ակտիվներ

. Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Ղտ 132, Կտ 131

- ա) կատարվել է ոչ նյութական ակտիվի վերադասակարգում
- բ) հաշվարկվել է ոչ նյութական ակտիվի ամորտիզացիան
- գ) կապալառուից ստացվել է նորոգված հիմնական միջոցը
- դ) դուրս է գրվել ոչ նյութական ակտիվի կուտակված ամորտիզացիան

Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Ղտ 131, Կտ 311

- ա) այլ կազմակերպությունից ձեռք է բերվել արտոնագիր
- բ) ներստեղծված ոչ նյութական ակտիվները կապիտալացվել են
- գ) հիմնադիրներից մեկը կանոնադրական կապիտալի ձևավորման ժամանակ տրամադրել է նոր տեխնոլոգիայի ներդրման արտոնագիր
- դ) ոչ նյութական ակտիվները վաճառվել են այլ կազմակերպությանը

Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Ղտ 131, Կտ 611

- ա) ձևակերպված է պատրաստի արտադրանքի հետ փոխանակված ոչ նյութական ակտիվի ձեռք բերումը՝ սկզբնական արժեքով
- բ) ձևակերպված է գույքագրմամբ հայտնաբերված պահեստում գտնվող գույքի ավելցուկը:

գ) ձևակերպված է սեփական կապիտալին վերագրված վերագնահատման հետևանքով ոչ նյութական ակտիվի արժեքի աճը

դ) ոչ նյութական ակտիվները վաճառվել են այլ կազմակերպությանը

. Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Ղտ 713, Կտ 132

ա) հաշվարկվել է ամորտիզացիա լիցենզիաների համար

բ) հաշվարկվել են ոչ նյութական ակտիվների արժեզրկումից կորուստները:

գ) դուրս է գրվել ոչ նյութական ակտիվի կուտակված ամորտիզացիան

դ) ոչ նյութական ակտիվները վաճառվել են այլ կազմակերպությանը

Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Ղտ 131, Կտ 311

ա) հիմնադիրները ներ են դրել են ծառայությունների օգտագործման իրավունքը որպես ներդրում կանոնադրական կապիտալում

բ) ներստեղծված նոր տեխնոլոգիայի մշակման ծախսումները կապիտալացվել են

գ) ձևակերպվել է այլ կազմակերպությունից որպես շնորհ ստացված համակարգչային ծրագրի մուտքագրումը

դ) ոչ նյութական ակտիվները վաճառվել են այլ կազմակերպությանը

. Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Ղտ 131, Կտ 152

ա) կանխավճարի դիմաց ստացվել է արտոնագիր

բ) ձեռքբերված արտոնագրի դիմաց վճարվել է կանխիկ դրամով

գ) կանխավճարի դիմաց ստացվել են գործիքներ

դ) մուտքագրվել է որպես շնորհ ստացված համակարգչային ծրագիրը

Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Ղտ 813, Կտ 132

- ա) ձևակերպված է արտադրական նպատակներով օգտագործվող ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան
- բ) ձևակերպված է գործառնական վարձակալությամբ տրված ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան
- գ) ձևակերպված է իրական արժեքի մոդելով հաշվառվող վարձակալության տրված ներդրումային գույքի մաշվածքը
- դ) ձևակերպված է սկզբնական արժեքի մոդելով հաշվառվող վարձակալության տրված ներդրումային գույքի մաշվածքը

Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 131, Կտ 421

- ա) անհատույց ստացվել է ոչ նյութական ակտիվ
- բ) մատակարարից ապառիկ ձեռք են բերվել ոչ նյութական ակտիվներ
- գ) հաշվետու անձի կողմից վճարվել է ոչ նյութական ակտիվների ձեռքբերման համար
- դ) ձեռք են բերվել ոչ նյութական ակտիվներ, որն դիմաց վճարվել է հաշվարկային հաշվից

Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 813, Կտ 132

- ա) ձևակերպված է արտադրական նպատակներով օգտագործվող ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան
- բ) ձևակերպված է գործառնական վարձակալությամբ տրված ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան
- գ) ձևակերպված է իրական արժեքի մոդելով հաշվառվող վարձակալության տրված ներդրումային գույքի մաշվածքը
- դ) ձևակերպված է սկզբնական արժեքի մոդելով հաշվառվող վարձակալության տրված ներդրումային գույքի մաշվածքը

Ինչպե՞ս է ձևակերպվում գործառնությունը. Հիմնադիրներից մեկը կանոնադրական կապիտալի ձևավորման ժամանակ տրամադրել է նոր տեղումներ գնելու ներդրման արտոնագիր

ա) Դտ 111 Կտ 252

բ) Դտ 131 Կտ 311

գ) Դտ 131 Կտ 421

դ) Դտ 131 Կտ 624

Խնդիր

Կազմել ոչ նյութական ակտիվների շարժի ձևակերպումները և դրանք արտացոլել հաշիվներում.

h/h	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	Ձևակերպվել է արտադրանքի պատրաստման բաղադրատոմսի օգտագործման իրավունքը, որը ստացվել է կազմակերպության մասնակցից որպես ներդրում կանոնադրական կապիտալում	650 000
2	Հաշվարկային հաշվից վճարվել է լիցենզիայի ձեռքբերման	240000
3	Ձեռք է բերվել համակարգչային ծրագրեր ա/արժեքը բ/ԱԱՀ Ընդամենը	1000000 -
4	Հաշվարկային հաշվից վճարվել է համակարգիչների արժեքը	
5	Այլ կազմակերպությունից անհատույց ստացվել է արդյունաբերական նմուշի իրավունքը	120000
6	Մուտքագրվել են պետությունից որպես շնորհ ստացված ոչ նյութական ակտիվները	400000
7	Դուրս գրված տեխնոլոգիան անհատույց տրամադրվել է այլ կազմակերպությանը	

	ա/սկզբնական արժեքը բ/կուտակված ամորտիզացիան գ/հաշվեկշռային արժեքը	185000 111000
8	Արտադրանքի պատրաստման տեխնոլոգիան վաճառվել է այլ կազմակերպությանը ա/սկզբնական արժեքը բ/կուտակված ամորտիզացիան գ/հաշվեկշռային արժեքը	250000 100000
9	Ճանաչվել է եկամուտը տեխնոլոգիայի վաճառքից ա/բացթողման գներով բ/ԱԱՀ Ընդամենը վաճառքի գներով	200000
10	Կազմակերպությունը ձեռք է բերել համակարգչային ծրագիր սեփական արտադրանքով փոխանակելու միջոցով ա/արժեքը բ/ԱԱՀ Ընդամենը վաճառքի արժեքը	500000
11	Կազմակերպությունը ձեռք է բերել նյութեր, որոնց դիմաց տրամադրել է արտադրանքի պատրաստման բանաձևի իրավունքը ա/համաձայնեցված արժեքը առանց ԱԱՀ-ի բ/ԱԱՀ Ընդամենը վաճառքի արժեքը	90000
12	Հաշվարկվել է ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան, որոնք օգտագործվում են ա/արտադրականնպատակներով բ/վարչականնպատակներով Ընդամենը	15000 12000 27000

13	<p>Վաճառվել է արտոնագիր</p> <p>ա/սկզբնական արժեքը բ/կուտակված ամորտիզացիան գ/վաճառքի գինը դ/վաճառքի գնի մեջ ներառված ԱԱՀ</p>	<p>900000</p> <p>100000</p> <p>850000</p>
14	<p>Փակել ծախսերի հաշվառման հաշիվները և դրանց շրջանառությունը դուրս գրել ֆինանսական արդյունք հաշվին</p>	
15	<p>Փակել եկամուտների հաշվառման հաշիվները և դրանց շրջանառությունները փոխանցել ֆինանսական արդյունք հաշվին</p>	
16	<p>Որոշել և ձևակերպել հաշվետու ժամանակաշրջանի շահույթը կամ վնասը</p>	

**ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ, ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ և ԾԱԽՍԵՐԻ
ՀԱՇՎԱՌՈՒՄ**

1. Տալ եկամուտի սահմանումը.

_____:

2. Բնութագրել սեփական կապիտալի և եկամուտների կապը. _____:

3. Տալ ծախսի սահմանումը.

_____:

4. Բնութագրել սեփական կապիտալի և ծախսերի կապը.

_____:

Խնդիր 1. Գործառնության բովանդակությունից ելնելով տալ ճիշտ հաշվապահական ձևակերպում.

Գործառնության բովանդակությունը	Թղթակցող հաշիվները	
	Ղտ	Կտ
Վաճառվել է ապրանք,գումարը մուտքագրվել է հաշվարկային հաշիվ		
Դուրս է գրվել վաճառված ապրանքի ինքնարժեքը		
Գույքագրման ժամանակ հայտնաբերված պակասորդը դուրս է գրվել կազմակերպության հաշվին 35000 դրամ		
Ձևակերպել ընդհատված գործունեության արտադրանքի իրացումից հասույթը դեբիտորական պարտքի առաջացմաբ		
Կրեդիտագրել 731 հաշիվը		
Անավարտ 5 000 դրամի արտադրանքի ձևակերպում		
Գրել գործառնություններ,որոնց ժամանակ 751 հաշիվը դեբետագրվում է		
Գրել գործառնություններ,որոնց ժամանակ 751 հաշիվը կրեդիտագրվում է		

Խնդիր 2.Որոշել և ձևակերպել հետաձգված հարկային ակտիվի գումարը:

ա/ակտիվի հաշվեկշռային արժեքը 130 000 դրամ է,հարկային բազան 140.000դրամ:Շահութահարկի դրույքաչափը 18 տոկոս է:

բ/կազմակերպության եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում կազմել 2 650 000դրամ,ծախսերը կազմել են 1 980 000: Շահութահարկի դրույքաչափը սահմանված է 18%:

գ/կազմակերպության շահութահարկի գումարը հաշվետու ժամանակաշրջանի համար կկազմի`

ա/107000դրամ
գ/125000դրամ

բ/134 000 դրամ

Խնդիր 3.

Որոշել և ձևակերպել գործառնական գործունեության ֆինանսական արդյունքը

Նորակ ՍՊԸ-ն ձեռք է բերել նյութեր, որոնք նախատեսված են արտադրանքի արտադրությունում օգտագործելու համար: Դրանց մեծ մասը օգտագործվել է , իսկ մի փոքր մասը մնացել է պահեստում: Քանի որ ընկերությունը ձեռնարկում է նոր արտադրատեսակի արտադրություն, որում չեն օգտագործվում արդեն ձեռք բերված նյութերը, որոշում է այն վաճառել:

Մնացորդային նյութերի ձեռք բերման արժեքը 85 000 դրամ է : Այն վաճառվում է Սիս ՓԲԸ-ին 125 000 դրամ գումարով` ներառյալԱԱՀ: Սիս ՓԲԸ-ն սահմանված ժամկետում չի վճարում գումարը, որի համար հաշվարկվում է

25 000 դրամ տույժ: Որոշել գործարքից առաջացած ֆինանսական հետևանքը.

Խնդիր 4.

Որոշել և ձևակերպել գործառնական գործունեության ֆինանսական արդյունքը

Կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանում առաքել է արտադրանք գնորդներին՝ 18 500 000 դրամ ինքնարժեքով: Արտադրանքի արժեքը բաց թողման գներով /առանց ԱԱՀ/ կազմում է 25 000 000 դրամ: Վաճառքի իրականացման համար ծախսվել են փաթեթավորման նյութեր՝ 150 000 դրամ, հաշվարկվել է աշխատավարձ՝ 690 000 դրամ: Հաշվարկային հաշվից վճարվել է արտադրանքի փոխադրման համար 500 000 դրամ:

Վարչական նպատակներով կատարվել են հետևյալ ծախսերը.

- * հաշվարկվել է աշխատավարձ անձնակազմին՝ 1 000 000 դր
- * ծախսվել են նյութեր շենքի վերանորոգման համար՝ 250 000 դր
- * հաշվարկվել է հիմնական միջոցների մաշվածությունը՝ 200 000 դր

1. Բանվորն անսվա ընթացքում աշխատել է 200 ժամ, իսկ ժամային տարիֆային դրույքը 180 դրամ է: Հաշվել բանվորի անսական աշխատավարձը:

2. Ծառայողի անսական պաշտոնային դրույքաչափը 70.000 դրամ է: Տվյալ անսուն 25 աշխատանքային օր է: Ըստ տարբելի՝ ծառայողը աշխատել է 21 օր: Հաշվել ծառայողի հասանելիք աշխատավարձը:

3. Հավաքման արտադրամասի մարձրակարգմանվորը անսվա ընթացքում հավաքել է 35 հանգույց: Մեկ հանգույցի հավաքման վարձաչափը 1.300 դրամ է: Հաշվել բանվորի աշխատավարձի գումարը:

4. Աշխատողին տրամադրվել է արձակուրդ 24 աշխատանքային օր 2019թ. հունիսի 10-ից: Նրա աշխատավարձի գումարը նախորդ 12 ամիսների ընթացքում կազմել է 630.000 դրամ: Հաշվել աշխատողի արձակուրդային աշխատավարձի գումարը:

5.5- օրյա աշխատանքային շաբաթվա աշխատողին տրամադրվել է հերթական արձակուրդ 2018 թ. հունիսի 10-ից: Նրա աշխատավարձի գումարը նախորդ 12 ամիսների ընթացքում կազմել է 720.000 դրամ: Հաշվել աշխատողի արձակուրդային աշխատավարձի գումարը:

6.6- օրյա աշխատանքային շաբաթվա աշխատողին տրամադրվել է հերթական արձակուրդ 2020թ. հունիսի 15-ից: Նրա աշխատավարձի գումարը նախորդ 12 ամիսների ընթացքում կազմել է 680.000 դրամ: Հաշվել աշխատողի արձակուրդային աշխատավարձի գումարը:

7. Հաշվել վարձու աշխատողի միջին օրական աշխատավարձը, եթե նրա միջին ամսական աշխատավարձը կազմում է 118.000 դրամ.

ա) հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում _____ դրամ,

բ) վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում _____ դրամ:

8. Կատարել ամենամյա արձակուրդի հաշվարկ:

Հաշվել վարձու աշխատողի ընթացիկ տարվա արձակուրդայինի գումարը, եթե նրա միջին օրական աշխատավարձը կազմել է 8.500 դրամ.

ա) հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ _____ դրամ,

բ) վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ _____ դրամ:

9. Հաշվել վարձու աշխատողի միջին ամսական աշխատավարձը, եթե նա նախորդ 12 ամիսներին ունեցել է հետևյալ ամսական աշխատավարձերը.

1. 85.000

2. 90.000

3. 91.500 (1.500 լրացուցիչ աշխատավարձ)

4. 108.000 (12.000 անաշխուտ անակուրջուն)

5. 96.200 (6.200 դրամ հավելավճար)

6. 90.000

7. 90.000

8. 114.000 (25.000 պարգևավճար)

9. 90.000

10. 90.000

11. 91.000

12. 90.000

Կատարել վերջնահաշվարկ

1/Հաշվել վարձու աշխատողի վերջնահաշվարկի գումարը, եթե նրա հերթական արձակուրդն օգտագործվել է 7 ամիս առաջ, և միջին օրական աշխատավարձը կազմել է 5.000 դրամ:

2/Կատարել վարձու աշխատողի վերջնահաշվարկ հնգօրյա աշխատանքային շաբաթվադեպքում, եթե նա նախորդ հերթական արձակուրդը վերցրել է 9 ամիս առաջ, և նախորդ 12 ամիսներին ունեցել է հետևյալ ամսական աշխատավարձերը.

1. 102.000 դրամ
2. 102.000 դրամ
3. 108.000 (արձակուրդային)
4. 102.000 դրամ
5. 106.500 (որից 4.500 դրամ հավելավճար)
6. 104.500(2.500 լրացուցիչ աշխատավ.)
7. 102.000 դրամ
8. 126.000(24.000 պարգևավճար)
9. 102.000 դրամ
10. 118.000 (16.000 անաշխ.)
11. 105.000 (3.000 պարգևավճար)
12. 102.000 դրամ

3/Կատարել վարձու աշխատողի վերջնահաշվարկ վեցօրյա աշխատանքային շաբաթվադեպքում, եթե նա նախորդ հերթական արձակուրդը վերցրել է 14 ամիս առաջ և նախորդ 12 ամիսներին ունեցել է հետևյալ ամսական աշխատավարձերը:

1. 99.000 դրամ
2. 103.000 (4.000 դրամ հավելավճար)
3. 99.000 դրամ
4. 99.000 դրամ
5. 99.000 դրամ
6. 100.000 (1.000 լրացուցիչ աշխատավարձ)
7. 99.000 դրամ
8. 108.000(9.000 դրամ պարգևավճար)
9. 99.000 դրամ

10. 110.000 (11.000 անաշխ.)

11. 99.000 դրամ

12. 99.000 դրամ

3/Հաշվարկելի մայրությաննպաստ

Ժամանակաշրջան		07.09.15-24.01.20		
Մայրությաննպաստ		140օր		
Հաշվարկվող ամիսներ		Աշխատավարձ	Հավելումներ	Ընդամենը
1	Սեպտեմբեր	67000		67000
2	Հոկտեմբեր	67000		67000
3	Նոյեմբեր	67000		67000
4	Դեկտեմբեր	67000		67000
5	Հունվար	67000		67000
6	Փետրվար	67000		67000
7	Մարտ	67000		67000
8	Ապրիլ	67000		67000
9	Մայիս	67000		67000
10	Հունիս	67000		67000
11	Հուլիս	73000		73000
12	Օգոստոս	73000		73000
Ընդամենը		816000	0	816.000

ԽՆԴԻՐ.Ստորև բերված տվյալների հիման վրա հաշվարկել «ՄԱԳԱՄՊԸ-ի ապրիլ ամսվա աշխատավարձը, արձակուրդային, ժամանակավոր անաշխատունակության նպաստը,կատարել պահումներ և լրացնել աշխատավարձի հաշվարկա-վճարային տեղեկագիրը ապրիլ ամսվա համար.կազմակերպությունը աշխատում է վեցօրյա աշխատանքային շաբաթով

1.Կազմակերպության տնօրեն Տիգրան Միրունյանի պաշտոնական դրույքաչափը կազմում է 220 000 դրամ է,ապրիլ ամսին հաշվարկվել է պարգևավճար պաշտոնայի դրույքաչափի 50%-ի չափով,ապրիլ ամսում բացակայություն չունի.

2.Կազմակերպության հաշվապահ Գայանե Պետրոսյանի պաշտոնական դրույքաչափը 185 000 դրամ է,ապրիլ ամսում նա 1 օր բացակայել է:Ապրիլ ամսվա առաջին կեսի կանխավճարը 30 000 դրամ է:

3.Կազմակերպության տնտեսագետ Լիանա Գևորգյանի պաշտոնական դրույքաչափը կազմում է 145 000 դրամ:Ապրիլի 10-ից նրան տրվել է ամենամյա արձակուրդ :Նախորդ 12 ամիսների աշխատավարձի հանրագումարը կազմում է 1.780.000 դրամ:

4.Արտադրության պետ Սամվել Ենոքյանի ամսեկան աշխատավարձը կազմում է 115 000 դրամ:Ապրիլի 7-ից 18-ը նա ներկայացրել է անաշխատունակության թերթիկ հիվանդության վերաբերյալ:Նախորդ 12 ամիսների աշխատավարձի հանրագումարը կազմում է 1 420 000դրամ,որից Հաշվարկված պարգևավճարի գումարը 125 000 դրամ:Նա այդ ամիսներին բացակայություններ չիունեցել:

5.Գանձապահ Մարիամ Գևորգյանին հաշվարկվել է մայրության նպաստ 140օր/07.04-11.08/ժամանակաշրջանի համար:Նախորդ 12 ամիսների աշխատավարը կազմել է 920.000դրամ:

6.Հերթապահության բաժնի աշխատակից Կարեն Մետրոսյանը 18.04.2018թ.ներկայացրել է դիմում ազատման վերաբերյալ:Նրան կատարվել է վերջնահաշվարկ:Նա իր հերթական արձակուրդը

օգտագործել է 5 ամիս առաջ, միջին օրական աշխատավարձը կազմում է 4200 դրամ:

Խնդիր

Պահանջվում է ստորև բերված տվյալների հիման վրա ձևավորել կանոնադրական կապիտալի ավելացման գործառնությունները և որոշել կանոնադրական կապիտալի հաշվեկշռային արժեքը. Տվյալներ. Կազմակերպության կանոնադրական կապիտալը ձևավորված է 1000 դրամ անվանական արժեքով 5000 հատ սովորական բաժնետոմսերով և 2000 դրամ անվանական արժեքով 1000 հատ արտոնյալ բաժնետոմսերով: Կազմակերպությունը լրացուցիչ թոխարկել է 8000 հատ սովորական բաժնետոմս նույն անվանական արժեքով և 3000 հատ արտոնյալ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 1500 դրամ անվանական արժեքով: Սովորական բաժնետոմսերը տեղաբաշխվել են 1200 դրամով, ընդ որում 3000 հատը փոխանակվել է հողամասի հետ, իսկ մնացածը տեղաբաշխվել է ֆոնդային բորսայի միջոցով: Վերջիններիս դիմաց վճարումը մուտքագրվել է հաշվարկային հաշիվ: Արտոնյալ բաժնետոմսերը տեղաբաշխվել են 2000 դրամով: Այդ բաժնետոմսերի դիմաց բաժնետերերը պարտավորվել են վճարել 6 ամսվա ընթացքում:

Խնդիր

ԲԲԸ-ի կանոնադրական կապիտալի մեծությունը 24 000 000 դրամ է: 2016թ. հուլիարին ընկերությունը որոշել է մեծացնել կանոնադրական կապիտալը և թողարկել է 2000 հատ սովորական բաժնետոմս՝ 2000 դրամ անվանական արժեքով: Բաժնետոմսերը տեղաբաշխվել են 2500 դրամով: Բաժնետերերից վճարը ստացվել է հաջորդ ամսվա ընթացքում և մուտքագրվել է հաշվարկային հաշիվ: Պահանջվում է ձևակերպել կանոնադրական կապիտալի ավելացման գործառնությունները:

ԽՆԴԻՐ.Ստորև բերված տվյալների հիման վրա տալ հետ գնված բաժնետոմսերի հետ կապված հաշվապահական ձևակերպումները.

Ընկերությունը հետ է գնել 100 բաժնետոմս,անվանական արժեքը` 10 հազար դրամ,իսկ հետ գնման գինը 13 հազար դրամ:

ա/ընկերությունը հետ գնված բաժնետոմսերից 50հատը վաճառել է 16 հազար դրամով/16-13/

բ/ընկերությունը հետ գնված բաժնետոմսերից 40 հատը վաճառել է 11 հազար դրամով/11-13/

գ/ընկերությունը հետ գնված բաժնետոմսերից 10 հատը հանում է շրջանառությունից/մարում է/.

ԽՆԴԻՐՏալ հաշվապահական ձևակերպումներ

Ընկերությունը տարեկան գործունեության արդյունքում ստացել է 125600.0հազար դրամի եկամուտ և 118400,0հազար դրամի ծախս:Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ` չբաշխված շահույթից 7000,0հազար դրամը որոշվում է բաշխել հետևյալ կերպ.

- 500,0հազար դրամ գումարով կատարել պահուստային կապիտալին հատկացումներ
- 6500,0հազար դրամ գումարով հայտարարել շահաբաժիններ

ԹԵՍԵՐ.

1. Հետ գնված բաժնետոմսերը.

ա)կարող են մարվել կամ նորից վաճառվել

բ) պարտադիր պետք է մարվեն

գ) պարտադիր պետք է վաճառվեն

դ) կարող են ուղղվել վնասների ծածկմանը

2. Հետ գնված բաժնետոմսերը հաշվառվում են.

- ա) անվանական արժեքով
- բ) հետգնման արժեքով
- գ) վաճառքի արժեքով
- դ) տեղաբաշխման արժեքով

3. Ինչպե՞ս է ձևակերպվում գործառնությունը. Հետ են գնվել սեփական կապիտալի հասարակ բաժնետոմսերը, որոնց դիմաց կատարվել է վճարում հաշվարկային հաշվից.

- ա) Դտ 312 Կտ 252
- բ) Դտ 313, Կտ 252
- գ) Դտ 311, Կտ 252
- դ) Դտ 252 Կտ 313

4 Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 313, Կտ 253

- ա) հետ են գնվել սեփական բաժնետոմսերը, որոնց դիմաց բաժնետերերին տրամադրվել են հիմնական միջոցներ
- բ) հետ են գնվել սեփական բաժնետոմսերը, որոնց դիմաց վճարվել է հաշվարկային հաշվից
- գ) հետ են գնվել սեփական բաժնետոմսերը, որոնց դիմաց վճարվել է արտարժութային հաշվից
- դ) հետ գնված բաժնետոմսերը վաճառվել են անվանական արժեքով

5. Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Դտ 313, Կտ 251

- ա) հետ են գնվել սեփական բաժնետոմսերը, որոնց դիմաց բաժնետերերին տրամադրվել են հիմնական միջոցներ

բ) հետ են գնվել սեփական բաժնետոմսերը, որոնց դիմաց վճարվել է հաշվարկային հաշվից

գ) հետ են գնվել սեփական բաժնետոմսերը, որոնց դիմաց վճարվել է դրամարկղից

դ) հետ գնված բաժնետոմսերը վաճառվել են անվանական արժեքով

6. Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Ղտ 251, Կտ 311

ա) այլ կազմակերպությունից անհատույց ստացվել է կանխիկ դրամ

բ) հիմնադիրներից ստացվել է կանխիկ դրամ՝ որպես ներդրում կանոնադրական կապիտալում

գ) հարվարկային հաշվում ստացվել է հիմնադիրներից՝ որպես ներդրում կանոնադրական կապիտալում

դ) հետ են գնվել սեփական բաժնետոմսերը, որոնց դիմաց բաժնետերերին վճարվել է դրամարկղից

7. Ինչ՞ է նշանակում հետևյալ ձևակերպումը՝ Ղտ 252, Կտ 311

ա) այլ կազմակերպությունից անհատույց ստացվել է կանխիկ դրամ

բ) հիմնադիրներից ստացվել է կանխիկ դրամ՝ որպես ներդրում կանոնադրական կապիտալում

գ) հարվարկային հաշվում ստացվել է հիմնադիրներից՝ որպես ներդրում կանոնադրական կապիտալում

դ) հետ են գնվել սեփական բաժնետոմսերը, որոնց դիմաց բաժնետերերին վճարվել է

զ/ընկերությունը հետ գնված բաժնետոմսերից 10 հատը հանում է շրջանառությունից/մարում է/.

ԽՆԴԻՐ.Պահանջվում է կատարված գործառնությունները ձևակերպել և արտացոլել կապիտալի շարժը հաշվառող հաշիվներում.

Կազմակերպության կանոնադրական կապիտալը ձևավորվել է 10 հազ. դրամ անվանական արժեքով 20 հազար բաժնետոմսի տեղաբաշխումից և կազմել է 200.000 հազ. դրամ:

Հաշվետու տարում (2019թ.) կանոնադրական կապիտալի կազմում տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները՝

	Գործառնության բովանդակությունը	Թղթակցող հաշիվներ		Գումար (հազ. դրամ)
		Դտ	Կտ	
1.	Մայիս ամսին լրացուցիչ թողարկվել և տեղաբաշխվել է 5.000 հատ բաժնետոմս՝ յուրաքանչյուր բաժնետոմսի համար վճարելով 10,5 հազ. դրամ (յուրաքանչյուրի անվանական արժեքը 10 հազ. դրամ է):			
2.	Հունիս ամսին տեղաբաշխված 2.500 բաժնետոմսի դիմաց բաժնետերերից ձեռք են բերվել. հումք՝ 15.000 հազ. դրամի, հիմնական միջոցներ՝ 20.000 հազ. դրամի			
3.	Հոկտեմբերին ֆոնդային բորսայում վաճառվել է 4.000 հազ. դրամի բաժնետոմս և ստացված գումարը մուտքագրվել ընկերության հաշվարկային հաշիվ			
4.	Սեպտեմբերին հաշվարկային հաշվից վճարվել է 500 հատ հետ գնված			

	բաժնետոմսի արժեքը՝ յուրաքանչյուրը 13 հազ. դրամով			
5.	Դեկտեմբերին հետ գնված 200 բաժնետոմսը մարվել է՝			
6.	Հետ գնված բաժնետոմսերից 100 հատը վերավաճառվել է՝ յուրաքանչյուրը 12 հազ. դրամով. Վաճառքից գումարը մուտքագրվել է հաշվարկային հաշիվ:			

ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

ԽՆԴԻՐ 1. Ոչ ռեզիդենտ կամակերպության նախորդ տարվա փաստացի շահութահարկի գումարը կազմել է 9.000.000 դրամ, իսկ նախորդ եռամսյակի իրացման շրջանառությունը կազմել է 54 մլն դրամ: Հաշվել շահութահարկի գծով կանխավճարները 2-ի դեպքում էլ, ո՞րը կընտրի կազմակերպությունը:

ԽՆԴԻՐ 2. Հաշվել արտադրական նշանակության շինություն հանդիսացող անշարժ գույքի համար պետբյուջե վճարվող գույքահարկի գումարը, եթե դրա հարկային բազան կազմել է.

ա) 8.000.000 դրամ, բ) 15.000.000 դրամ, գ) 25.000.000 դրամ

ԽՆԴԻՐ 3. ա) Գրանցված աշխատավարձը- 350. 000 դրամ
Ծննդյան թիվ – 1970թ.

Կամավոր կուտակային համակարգին միացած
Հաշվել գուտ աշխատավարձը

բ) Գրանցված աշխատավարձը- 420. 000 դրամ
Ծննդյան թիվը – 1995թ.

Աշխատում է ՏՏ ոլորտում

Հաշվել մաքուր աշխատավարձը

գ) Գրանցված աշխատավարձը 600. 000 դրամ

Ծննդյան թիվ- 1989թ. :

Հաշվել մաքուր աշխատավարձը:

ԽՆԴԻՐ 4. Շահութահարկի կանխավճարները 4 եռամսյակի համար կազմել են 2,500,000 դրամ: Կազմակերպությունը փոխանցել է ևս 320,000 դրամ՝ հիմք ընդունելով փաստացի շահութահարկի մեծությունը: Հետագայում պարզվել է, որ վերջինս պակաս է ցույց տրվել և կազմում է 3,015,000 դրամ: Հաշվել տուգանքի մեծությունը:
Հուշում: *Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի յուրաքանչյուր հարկային հաշվարկում (բացառությամբ*

*արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարության)
հարկի գումարը Օրենսգրքով կամ վճարներ ի վերաբերյալ
Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով
հաշվարկվող չափից պակաս ցույց տալու դեպքերում զանձվում է
պակաս ցույց տրված հարկի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ
գումարի 50 տոկոսի չափով:*

Խնդիրներ

Հաշվել մաքուր աշխատավարձը.

1. Սահակյանի գրանցված աշխատավարձը կազմում է 600. 000 դրամ :Կարինեն ծնվել է 1990թ. -ին: Հաշվել Կարինեի մաքուր աշխատավարձը:
2. 1974թ. հունվարի 1-ին ծնված Ղազարյանը աշխատում է, Լոռի ՍՊԸ -ում: Աշխատանքային պայմանագրում գրանցված աշխատավարձի մեծությունը 300. 000 դրամ է: Հաշվել Արտաշեսի մաքուր աշխատավարձը:
3. Պողոսյանը՝ ծնված 1970թ. -ին, 30 տարի է ինչ աշխատում է , Ասֆալտագործ ՍՊԸ-ում: Գրանցված աշխատավարձը՝ 300. 000 դրամ, պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգին չի մասնակցում:
4. Սարիբեկյանի աշխատավարձը՝ առանց պահումների, կազմում է 70. 000 դրամ: Ծնվել է 1995թ. -ին: Ցույց տալ բոլոր պահումները աշխատավարձից:
5. Առուստամյանը՝ ծնված 1973թ-ին կամավոր կերպով մասնակցում է կուտակային կենսաթոշակային համակարգին: Աշխատավարձը կազմում է 180. 000 դրամ:

6. Սաթենը ստանում է 800,000 դրամ աշխատավարձ: Ծնվել է 1989թ. -ին: Աշխատում է SS ոլորտում:
7. Հարությունը ունի փոքրիկ ընտանեկանբիզնես, որի շրջանառությունը չի գերազանցում 24մլն. դրամը: Հարությունի կինը հանդիասնում է գրանցված աշխատող նույն կազմակերպությունում: Նրա աշխատավարձի մեծությունը կազմում է 120,000 դրամ: Հաշվել մաքուր աշխատավարձը, եթե նա ծնվել է 1992թ. ին:

Խնդիրներ գույքահարկի վերաբերյալ

- /1. Բնակելի կառուցապատման համար ձեռք է բերվել 100 մ² հողակտոր Հրազդան քաղաքից դուրս: Հաշվել հողի հարկի գումարը, եթե 1 մ²-ու կադաստրային գնահատման արժեքը 62.000 դրամ է:
2. Հաշվել հասարակական նշանակության օբյեկտի համար վճարվող գույքահարկի գումարը, եթե դրա արժեքը կազմում է 15. 000. 000 դրամ:
3. Հաշվել արտադրական նշանակության շինություն հանդիասացող անշարժ գույքի համար պետբյուջե վճարվող գույքահարկի գումարը, եթե դրա հարկային բազան կազմել է.
ա) 5.000.000 դրամ, բ) 7.000.000 դրամ, գ) 11.000.000 դրամ
4. Հաշվել հասարակական նշանակության շինություն հանդիասացող անշարժ գույքի համար պետբյուջե վճարվող գույքահարկի գումարը, եթե դրա հարկային բազան կազմել է 20. 000. 000 դրամ
5. Հաշվել արտադրական նշանակության շինություն հանդիասացող անշարժ գույքի համար պետբյուջե վճարվող գույքահարկի գումարը, եթե դրա հարկային բազան կազմել է.

ա) 8.000.000 դրամ, բ) 15.000.000 դրամ, գ) 25.000.000 դրամ

6. Հաշվել մեքենայի գույքահարկի գումարը, եթե դրա վաղեմության ժամկետը.

ա) 5 տարի է—Opel /մարդատար/ - 113 ձիաուժ

բ) 7 տարի է— Toyota /մարդատար/-280 ձիաուժ

գ) 10 տարի— Mercedes /մարդատար/ - 600 ձիաուժ

7. Չի վճարվել 254. 000 դրամ շարժական գույքի գույքահարկը: Հաշվել տույժի մեծությունը, եթե վճարումը չի կատարվել դեկտեմբերի 1-ից սկսած 50 օրացուցային օր:

ԽՆԴԻՐՆԵՐ ակցիզային հարկի վերաբերյալ

1. Հաշվել 2լ էթիլային սպիրտի ակցիզային հարկի գումարը:

2. Ենթաակցիզային ապրանք հանդիսացող սպիրտային խմիչքի բաց թողնման գինը 6500 դրամ է (1 լիտր): Հաշվել ակցիզային հարկի գումարը, եթե դրա սպիրտայնությունը կազմում է 47%:

3. Ձեռնարկատերը նավթ ներմուծելու համար վճարել է 1.269.000 դրամ: Քանի՞ տոննա նավթ է ներմուծել ձեռնարկատերը:

4. ՀՀ տարածք է ներմուծվել 2403 ծածկագրով 1 տոննա ենթաակցիզային ապրանք: Հաշվել ակցիզային հարկի գումարը:

5. Ենթաակցիզային ապրանք հանդիսացող սպիրտային խմիչքի բաց թողնման գինը 2000 դրամ է (1 լիտր): Հաշվել ակցիզային հարկի գումարը, եթե նրա սպիրտայնությունը կազմում է 50%:

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Օրինակ 1. Կազմակերպությունը գնել է 1500,0 հազար դրամ արժեքով փայտամշակման հաստոց՝ կահույք արտադրելու համար: Ըստ կազմակերպության մասնագետների գնահատումների՝ հաստոցի օգտակար ծառայությունը 10 տարի է: Բավարարում է արդյոք հաստոցը հիմնական միջոցների սահմանմանը:

Օրինակ 2. Կազմակերպությունը գնել է 40,0 հազար արժեքով 10 հատ գործիք: Կազմակերպության մասնագետները, հաշվի առնելով գործիքների տեխնիկական տվյալները, ինչպես նաև նմանատիպ գործիքների օգտագործման փորձը, գնահատում են օգտակար ծառայությունը 11 ամիս: Բավարարում են արդյոք գործիքները հիմնական միջոցների սահմանմանը:

Օրինակ 3. Կազմակերպությունը գնել է 65000,0 հազար դրամ գումարով պղնձի հանքավայր: Այն արդյունահանելու համար կառուցում է հանքահոր, իսկ արդյունահանման ընթացում օգտագործվող մեքենաները և սարքավորումները գնահատվում են 10 տարի: Որն է բավարարում հիմնական միջոցների սահմանմանը:

Խնդիր.

հիմնական միջոցների կառուցվածքի որոշման վերաբերյալ /Երևանի թիվ 1 հացի գործարան ԲԲԸ-ի տվյալներով/

Շենքեր	19166,0 հազ. դրամ
Մեքենասարքավորումներ	36500,0
Կրանսայորտային միջոցներ	6370,0
Գործիքներ	3200,0
Տնտեսական գույք	9470,0

Պահանջվում է որոշել հիմնական միջոցների կառուցվածքը տոկոսով.

Առաջադրանք.

1.«Համակարգիչ»ՍՊԸ-ն և «Կահույք» ՓԲԸ-ն գնում են նմանատիպ համակարգիչ 850,0 հազար դրամ գումարով:

Քանի որ «Համակարգիչ,ՍՊԸ-ն գործունեություն է իրականացնում համակարգչային տեխնիկայի բնագավառում և նրան անհրաժեշտ է միշտ ունենալ նորագույն տեխնիկա,ընկերությունը ձեռք բերման պահին գնահատում է այն օգտագործել 2 տարի,որից հետո այն վաճառել՝փոխարենը նոր,ավելի արդիական համակարգիչ ձեռք բերել:Ակնկալվում է 2 տարուց հետո համակարգչի վաճառքից ստանալ 200,0 հազա դրամ,իսկ միջնորդային ծառայության համար կվճարեն գործարքի 10 տոկոսը:

Որքան է կազմում համակարգչի մնացորդային արժեքը և մաշվածության գումարը«Համակարգիչ»ՍՊԸ-ում:

«Կահույք» ՓԲԸ-ն համակարգիչը գնել է,որպեսզի այն օգտագործի ընկերության հաշվապահությունում 5 տարի:Օգտակար ծառայության վերջում ակնկալվում է համակարգչի լուծարումից կարևորագույն դետալները մուտքագրել,որոնց իրական արժեքը գնահատվում է 10,0 հազար դրամ:

Որքան է կազմում համակարգչի մաշվածության գումարը «Կահույք»ՓԲԸ-ում:

2.Կազմակերպությունը գնել է հաստոց 1200,0հազար դրամ արժեքով,որը նախատեսում է օգտագործել 10 տարի և օգտակար ծառայության վերջում այն վաճառել որպես մետաղի ջարդոն:

Ձեռքբերման պահին գնահատվում է ,որ մետաղի ջարդոնի իրական արժեքը կազմում է 62,0հազ.դրամ,իսկ լուծարման վրա լատարվող ծախսերը՝4,0հազ.դրամ:

ա/որքան է կազմում հաստոցի մնացորդային արժեքը.

բ/որքան է կազմում հաստոցի մաշվածության գումարը.

.Որքան է գնահատվում հիմնական միջոցի օգտակար ծառայությունը.

Վճարովի հիմունքներով գործող «Գիտելիք» քոլեջը և պետական պատվերով ֆինանսավորվող թիվ 45 դպրոցը գնել են աշակերտական սեղաններ:«Գիտելիք»քոլեջը հաշվի առնելով իր ֆինանսական բարվոք վիճակը/ուսման վարձը բարձր է և հավաքագրում է ժամանակին/,ակնկալում է սեղանների փոխարինումը նորերով 5 տարի հետո:

Դպրոցը,հաշվի առնելով պետական պատվերի ֆինանսավորման վիճակը,գնահատում է ,որ նոր գույք ձեռք բերելու հնարավորությունները շատ սուղ են և սեղանները հնարավոր կլինի փոխարինել նորերով 10 տարի հետո:Այդ ընթացքում ստիպված պետք է վերանորոգվի:

Առաջադրանք

Հաշվարկել հիմնական միջոցի մաշվածությունը գծային հավասարաչափ,նվազող մնացորդի և արտադրված արդյունքի միավորի մեթոդներով:

Խնդիր1,2

«Կահույք»ԲԲԸ-ն ձեռք է բերել փայտամշակման հաստոց 1200,0 հազար դրամ արժեքով:Ձեռքբերման պահին գնահատվում է հաստոցի օգտակար ծառայությունը 10 տարի,իսկ մնացորդային արժեքը 40,0 հազար դրամ:

նույն խնդիրը կիրառել նվազող մնացորդի դեպքում,գործակիցը 2:

Խնդիր 3.«Կահույք»ԲԲԸ-ն ձեռք է բերել փայտամշակման հաստոց 1200,0 հազար դրամ արժեքով:Ձեռքբերման պահին գնահատվում է հաստոցի օգտակար ծառայությունը 10 տարի,իսկ մնացորդային արժեքը 40,0 հազար դրամ:

Ընկերության մասնագիտական հանձնաժողովը գնահատում է ,որ հաստոցի օգտագործմամբ առաջին և երկրորդ տարում արտադրվում է 55 միավոր արտադրանք,երրորդ տարում`54,չորրորդ տարում`53,հինգերորդ տարում`50,վեցերորդ տարում`46,յոթերորդ տարում`40,ութերորդ տարում`33,իններորդ տարում`23 և տասներորդ տարում`12,որից հետո հաստոցի շահագործումը տնտեսապես ձեռնտու չի լինի:Տասը տարվա ընթացքում հաստոցով արտադրվում է ընդամենը 421 միավոր արտադրանք:

Հաշվարկել մաշվածությունը արդյունքի միավորի մեթոդով:

ԹԵՍՏԵՐ

Կազմակերպությունում կիրառվում է հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման նվազող մնացորդի մեթոդը:
Սարքավորման սկզբնական արժեքը 600 000 դրամ է, մնացորդային արժեքը 20 000 դրամ է, արագացման գործակիցը 2 է, իսկ օգտակար ծառայությունը սահմանվել է 5 տարի: Օգտակար ծառայության առաջին տարվա վերջին սարքավորման հաշվեկշռային արժեքը կկազմի.

- ա) 360 000 դրամ
- բ) 340 400 դրամ
- գ) 240 000 դրամ
- դ) 120 000 դրամ

Կազմակերպությունում կիրառվում է հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման նվազող մնացորդի մեթոդը: Սարքավորման սկզբնական արժեքը 1 500 000 դրամ է, մնացորդային արժեքը՝ 80 000 դրամ, արագացման գործակիցը 2 է, իսկ օգտակար ծառայությունը սահմանվել է 5 տարի: Օգտակար ծառայության երկրորդ տարվա մաշվածությունը կկազմի.

- ա) 360 000 դրամ
- բ) 340 400 դրամ
- գ) 240 000 դրամ
- դ) 120 000 դրամ

Կազմակերպությունում կիրառվում է հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման նվազող մնացորդի մեթոդը: Սարքավորման սկզբնական արժեքը 1 500 000 դրամ է, մնացորդային արժեքը՝ 80 000 դրամ, արագացման գործակիցը 2 է, իսկ օգտակար ծառայությունը սահմանվել է 5 տարի: Օգտակար ծառայության երկրորդ տարվա վերջին սարքավորման հաշվեկշռային արժեքը կկազմի.

- ա) 360 000 դրամ
- բ) 540 000 դրամ
- գ) 240 000 դրամ
- դ) 820 000 դրամ

Կազմակերպությունում կիրառվում է հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման նվազող մնացորդի մեթոդը: Սարքավորման սկզբնական արժեքը 400 000 դրամ է, մնացորդային արժեքը՝ 0 է, արագացման գործակիցը 2 է, իսկ օգտակար ծառայությունը սահմանվել է 5 տարի: Օգտակար ծառայության չորրորդ տարվա մաշվածությունը կկազմի.

- ա) 34 560 դրամ
- բ) 52 400 դրամ
- գ) 57 600 դրամ

դ) 96 000 դրամ

Կազմակերպությունում կիրառվում է հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման նվազող մնացորդի մեթոդը: Սարքավորման սկզբնական արժեքը 600 000 դրամ է, մնացորդային արժեքը 20 000 դրամ է, արագացման գործակիցը 2 է, իսկ օգտակար ծառայությունը սահմանվել է 5 տարի: Օգտակար ծառայության վերջին տարվա մաշվածությունը կկազմի.

ա) 57 760 դրամ

բ) 77 760 դրամ

գ) 52 000 դրամ

դ) 51 840 դրամ

Կազմակերպությունում կիրառվում է հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման նվազող մնացորդի մեթոդը: Սարքավորման սկզբնական արժեքը 1 500 000 դրամ է, մնացորդային արժեքը՝ 80 000 դրամ, արագացման գործակիցը 2 է, իսկ օգտակար ծառայությունը սահմանվել է 5 տարի: Օգտակար ծառայության վերջին ամբողջ տարվա մաշվածությունը կկազմի.

ա) 114 400 դրամ

բ) 152 400 դրամ

գ) 52 000 դրամ

դ) 50 840 դրամ

Կազմակերպությունում կիրառվում է հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման նվազող մնացորդի մեթոդը: Սարքավորման սկզբնական արժեքը 400 000 դրամ է, մնացորդային արժեքը՝ 0 է, արագացման գործակիցը 2 է, իսկ օգտակար ծառայությունը սահմանվել է 5 տարի: Օգտակար ծառայության վերջին տարվա մաշվածությունը կկազմի.

ա) 48 600 դրամ

բ) 52 400 դրամ

զ) 51 840 դրամ

դ) 50 840 դրամ

Խնդիր. Որոշել շահագործման հանձնված սարքավորումների սկզբնական արժեքը և կազմել հաշվապահական ձևակերպումները.

Տվյալներ. Հորիզոն ԲԲԸ-ն ձեռք է բերել տեղակայման ենթակա սարքավորումներ, մատակարարին վճարելով հաշվարկային հաշվից 360 000 դրամ, այդ թվում ԱԱՀ 60 000 դրամ: Տրանսպորտային կազմակերպության ծառայությունները սարքավորումների տեղափոխման համար կազմել են 24 000 դրամ, ներառյալ ԱԱՀ 4 000 դրամ: Սարքավորումների բեռնաթափման և համար վճարվել է 20 000 դրամ աշխատավարձ

«Մարս» ՍՊԸ-ն լեհական «Լուկաշ» ՍՊԸ-ից ձեռք է բերում 7600 ԱՄՆ դոլար գումարով մրգերի պահպանման սառնարան: Սառնարանը Վարշավայից Երևան և մինչև Մարս ՍՊԸ-ի պահեստ տեղափոխումը իրականացնում է «Տրանսպորտ» ՍՊԸ-ն, որի համար սահմանված վճարը կազմում է 700 հազ. դրամ: Սառնարանը աշխատանքի վիճակի բերելու համար կատարած աշխատանքի դիմաց ընկերության վերանորոգման արտադրամասի բանվորներին հաշվարկվում է աշխատավարձ 119 500 դրամ:

Ընդունենք, որ ներմուծման պահի դրությամբ մաքսատուրքի դրույքաչափը 10 տոկոս է, իսկ մաքսային արժեքը կազմում է 4500000 դրամ/ 1 ԱՄՆ դոլարը -500 ՀՀ դրամ, գումարած 700 000 դրամ տրանսպորտային ծախս/:

Սառնարանի ներմուծման ժամանակ հաշվարկվում և վճարվում է.

ա/մաքսատուրք 450 000

բ/ԱԱՀ /4 500 000+450 000/*20տոկոս

գ/մաքսավճար 6500 դրամ

Սառնարանը տեղափոխվում է ընկերության պահեստ:

Որոշել սառնարանի սկզբնական արժեքը՝ ըստ բաղկացուցիչների.

Կազմել հ/ապրանքագիր N 21 05.04.2018թ

մատակարար՝ Լուկաշ ՍՊԸ, Բելոռուսիայի հանրապետություն,
ք.Մինսկ, հ/հ 29000643089

«Մինսկբանկ» ՍՊԸ

Գնորդ՝ «Մարս» ՍՊԸ, ք.Երևան, հ/հ 001-113554-001-HSBS բանկ

Մրգերի պահմանման սառնարան, չափի միավորը՝ հատ,
քանակը՝ 1 , գինը 7600ԱՄՆ դոլար, գումարը 7600ԱՄՆ դոլար:

Լուկաշ ՍՊԸ՝ տնօրեն Մ.Բոբրովսկի, գլխ. հաշվապահ՝ Լ.
Կավալերովիչ, հանձնեց՝ Գ.Նովակովսկի

Մարս ՍՊԸ ավագապրանքագետ՝ Մ.Պապյան

Պայմանագիր 29, 10,03,2017թ, լիազորագիր 44, տրված Նարեկ
Պապյանին

Լրացնել Ձև ՀՄ-1, կազմման ամսաթիվը՝ 12.04.2018,
, գործառնության տեսակի ծածկագիրը՝ 113101, ակտ N 19,

Ակտի կազմման վայրը՝ ք.Երևան, Անանյանի.43

Մատակարար՝ Լուկաշ ՍՊԸ, ԲՀ, ք.Մինսկ, Ազատության պողոտա
18/21 շենք

Փոխադրողի անվանումը Սպայկա ՍՊԸ, Երևան, Ագաթանգեղոսի
45,

Դրոշմակնիք Ա-04, տեղերի քանակը՝ 5 ,փաթեթավորման
տեսակը-արկղ, ըստ փոխադրողի 3210 կգ, ,3210,

Անվանակարգային համարը-174,տեսակը,մանիշը ԿՍՍ-1Ա,
անձնագրի համարը 7873, ըստ փաստաթղթերի՝ մեկ, փաստացի՝
մեկ, ձեռքբերման գինը՝ դրամ, ձեռքբերման արժեքը՝ դրամ:

Հանձնաժողովի եզրակացությունը՝ ենթակա է շահագործման
մրգերի պահպանման արտադրամասում, հաշիվ 33,առ
12.04.2018թ, բեռնային մաքսային հայտարարագիր՝ 12.04.2018թ,
սառնարանի անձնագիր 7873:

տեղեկանք

հաշիվ N 31 տեղափոխում
ԲՄՀ 12.04մաքսատուրք
մաքսավճար
հաշվարկ՝ա/վճ.տեղ.